Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օրաթերթ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

Առավոտ
aravot daily

35/4131/ 25 փետրվարի 2012 շաբաթ

ISSN 1829-2224

Ուժեղ առաջնորդի ուժը

Հաջորդ կիրակի Ռուսաստանում կայանալու են նախագահական ընտրություններ: Չնայած այդ երկրի ակտիվ, մտավորական մասը խորաթես վիրավորված է վարչապետի եւ նախագահի «փոխատեղմամբ» եւ խորհրդարանական ընտրությունների կեղծմամբ, Պուտինը նախագահ դառնալու ճանապարհին լուրջ խնդիրներ չի ունենա: Հասկանալի է՝ ՌԴ վարչապետը լուրջ, ծանրակշիռ մրցակիցներ չունի եւ հաղթելու է ընտրությունների առաջին իսկ փուլում: Հենց դրան են ուղղվելու ամբողջ պետական ապարատի եւ խոշոր բիզնեսի ջանքերը: Ընտրությունները մեկ փուլով անցկացնելն անհրաժեշտ է՝ իշխանության ուղղահայացությունն էլ ավելի ամրապնդելու եւ իշխանավորների ու բյուրոկրատիայի շրջանում ինքնավստահության մթնոլորտ ստեղծելու համար: Այդ խավի տրամադրությունները լավագույնս արտահայտել է Թաթարստանի նախագահ Ռուստամ Մինիխանովը՝ «Ռուսաստանին մենեջեր պետք չէ, Ռուսաստանին պետք է ցար»: Ավելի տրամաբանական կլիներ, եթե ասեր՝ «սուլթան», որովհետեւ եթե նա իր հանրապետությունում մինի խան է, ապա ամբողջ կայսրությունում պետք է իշխի սուլթանը: Սա է հաճախ գործածվող «ուժեղ առաջնորդ» բառակապակցության վերծանումը. ցարն է (սուլթանը) որոշում, թե ով պիտի հարստանա, իսկ ով՝ մնա աղքատության մեջ, ով պիտի ազատություն վայելի, իսկ ով՝ փտի զնդանում, մերձավորներից որ մեկը դառնա վեզիր, որը՝ խան, իսկ որը՝ էմիր:

Իմ պատկերացումներն ուժի եւ մասնավորապես ուժեղ առաջնորդի մասին բոլորովին այլ են: Ուժեղ առաջնորդը նա չէ, ով բռունցքը խփում է սեղանին եւ իր նագիր-վեզիրներին ասում՝ «գողացեք, ես տեր եմ»: Առաջնորդի ուժը նրա լեգիտիմության մեջ է, երբ նա փորձում է ինչ-որ բան ապացուցել ոչ միայն բյուրոկրատիային, այլեւ բուն ժողովրդին, քաղաքացիներին: Այդ իմաստով Ելցինը ուժեղ ղեկավար էր, որը կարողացավ իր երկիրը նվազագույն կորուստներով դուրս բերել հետխորհրդային կոլապսից՝ որքան էլ այսօր իշխանության քարոզչությունը քարկոծի 90-ական թվականների Ռուսաստանը:

Բայց նման՝ իսկապես ուժեղ առաջնորդ ունենալու համար պետք են ակտիվ քաղաքացիներ: Ցավոք, դրանց պակասն է այսօր զգացվում նորանկախ հանրապետություններում: Այդ առիթով հիշեցի Պերճ Պռոշյանի խոսքերը, որոնք նա գրել է 19-րդ դարի կեսերի գյուղացիների մասին. «Ընդհանրապես գյուղացիները չեն սիրում խառնվել հասարակական գործերում. ամեն մարդ յուր անձնական հոգսի, յուր տան ցավի հետ է, յուր երեխանց ապրուստը ճարելն է նրա մտածմունքը»: 150 տարում քիչ բան է փոխվել:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ի՞նչ կա կառավարության մտքում

ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության քարտուղար Լարիսա Ալավերդյանն «Առավոտի» հետ զրույցում անդրադառնալով «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրինագծին՝ շբացառեց, որ կառավարության կողմից այս չարաբաստիկ փաստաթղթի ներկայացումը հնարավոր է, որ նպատակ ունի նաեւ ետին թվով արդարացնել 2008-ի «մարտիմեկյան» դեպքերի ժամանակ բանակի ներգրավումն ու օգտագործումը ներքաղաքական պրոցեսներին, ինչն այն ժամանակ ակնհայտորեն հակասահմանադրական էր. «Որ նման բան կա կառավարության մտքում պահված՝ հնարավոր է, որովհետեւ նման նախադեպեր եղել են, եւ այդ միտումով մինչեւ անգամ սահմանադրական նորմեր են վերանայվել: Նման բան տեղի է ունեցել մասնավորապես սեփականության իրավունքի մասով»:

Կարդացեք էջ 2:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Գնալ ճիշտ ուղղությամբ

«Ցանկացած դասական կուսակցություն հասարակության կարծիքը իմանալու երեք ձեւ ունի՝ անմիջական հանդիպումներ ընտրողների, հասարակության հետ, ինչը մենք անում ենք եւ արել ենք մշտապես: Այս օրերին մեր կուսակցության նախընտրական ծրագիրը քննարկում ենք հենց մեր հասարակության ներկայացուցիչների հետ: Երկրորդը՝ տարբեր սոցհարցումներն են, եւ երրորդը՝ բուն ընտրությունները: Սոցիոլոգիական հարցումները ցույց են տալիս, որ այսօր առաջատարը Հանրապետական կուսակցությունն է: Մեր հանդիպումները ցույց են տալիս, որ չնայած առկա բազմաթիվ խնդիրներին, բնակչության մեծամասնությունը իր խնդիրների լուծումը կապում է պատասխանատու ուժի հետ, իսկ այդ ուժը մարդիկ տեսնում են ՀՀԿ-ի մեջ: ՏԻՄ վերջին ընտրությունները ցույց տվեցին, որ ճնշող մեծամասնությամբ հաղթեցին հանրապետականները: Այս ամենը ի մի բերելով՝ կարող ենք ասել, որ մենք ճիշտ ճանապարհի վրա ենք եւ գնում ենք ճիշտ ուղղությամբ»,- «Առավոտի» հետ զրույցում ասաց ԱԺ փոխնախագահ, ՀՀԿ խոսնակ Էդուարդ Շարմազանովը:

Կարդացեք էջ 3:

Հավաքեցինք 13%՝ չհաշվենք, թե իրականում ինչքան հավաքեցինք

Aravot.am-ի խնդրանքով ՀՅԴ խմբակցության ղեկավար Վահան Հովհաննիսյանը երեկ մեկնաբանեց Ահարոն Ադիբեկյանի սոցիոլոգիական հարցումները, ըստ որի ՀՅԴ-ն կհավաքի 2.5% ձայն. «Ես հիշում եմ սոցիոլոգիական հարցումներ, որոնք նույնն էին ասում, բայց մենք հավաքեցինք 13%՝ չհաշվենք, թե իրականում ինչքան հավաքեցինք: Հայաստանում սոցիոլոգիական հարցումներն ունեն 2 թերություն:Ես չեմ թերագնահատում մեր սոցիոլոգների գիտելիքները, նրանց տիրապետած մեթոդաբանությունը, բայց ես մեր հասարակությունը գիտեմ: Նրանցից քչերն են, որ ճիշտն են պատասխանում, հասկանալի պատճառներով: Այլ սոցհարցումներ ցույց են տվել 19%»:

Կեղծ մետաղադրամների շրջանառությունը մտահոգիչ է

Փետրվարի 24-ին տեղի ունեցավ դատախազության ընդլայնված կոլեգիայի նիստը, որի ժամանակ վերլուծվեց հանրապետությունում 2011 թվականի հանցավորության վիճակը՝ շեշտադրում անելով առավելապես խնդիրների եւ բացթողումների վրա: Կոլեգիայի նիստին հրավիրվել եւ ներկա էին ՀՀ նախագահի օգնական Գեորգի Կուտոյանը, ԼՂՀ գլխավոր դատախազ Արշավիր Ղարամյանը, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ Անդրանիկ Միրզոյանը, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, պետական եկամուտների կոմիտեի եւ ՀՀ պաշտպանության նախարարության քննչական վարչությունների ղեկավարները: Ըստ պոլոտների՝ զեկուցումներով հանդես եկան ՀՀ գլխավոր դատախազի տեղակալները՝ Արամ Թամազյանը, Մնացական Սարգսյանը, Արմեն Դանիելյանը եւ Գեւորգ Կոստանյանը:

Կարդացեք՝ էջ 5:

ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

Քննարկում

Այսօր, ժամը 16-ին, Հենրիկ Մալյանի անվան թատրոնում տեղի կունենա քննարկում՝ «Ձուր թշնամու ջրաղացին» թեմայով:

Եղանակ

Երեւան -12 -1, Շիրակ -20 -4, Կոտայք -20 -4, Գեղարքունիք -20 -4, Լոռի -13 -2, Տավուշ -15 0, Արագածոտն լեռներ -20 -4, Արագածոտն նախալեռն. -12 0, Արարատ -12 0, Արմավիր -12 0, Վայոց Ձոր լեռներ -20 -4, Վայոց Ձոր նախալեռն. -12 +1, Սյունիքի հովիտներ -11 0, Սյունիքի նախալեռներ -12 -2, Արցախ -10 0

ԱԺ են գնում սահմանադրական կարգը վերականգնելու համար

Պարզվում է, ՀԱԿ-ում նախընտրական համամասնական ցուցակը կազմելիս առաջնորդվում են հետեւյալ սկզբունքով. ընտրել մեխանիզմ, տարբերակ, որը կնոպաստի գլխավոր խնդրի լուծմանը՝ վերականգնել սահմանադրական կարգը եւ հասնել Սերժ Սարգսյանի հրաժարականին: Այս մասին երեկ տեղեկացրեց ՀԱԿ անդամ Սամվել Աբրահամյանը՝ Քաղաքական եւ միջազգային հետազոտությունների հայկական կենտրոնի կազմակերպած «Ի՞նչ սկզբունքով են ձեւավորվում նախընտրական ցուցակները» թեմայով քննարկման ժամանակ: Իսկ թե ի՞նչ ձեւով պետք է հասնեն Սերժ Սարգսյանի հրաժարականին, պարոն Աբրահամյանը նշեց. «Տարբերակ 1. ՀԱԿ-ը ստանում է ԱԺ-ում ձայների մեծամասնություն եւ դնում է իմպիչմենթի հարցը, տարբերակ 2. ՀԱԿ-ը միավորվում է ԱԺ այլ ուժերի հետ եւ դնում է իմպիչմենթի հարցը, եւ տարբերակ 3. մինչեւ ԱԺ ընտրությունները ՀԱԿ-ը կարողանում է բարձրացնել համաժողովրդական մեծ ալիք եւ մինչեւ ընտրությունները հասնել Սերժ Սարգսյանի հրաժարականին»:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

«Սա քաղաքական կամքի դրսեւորումն էր»

Քաղաքագետ Սուրեն Սուրենյանցը, որը նախկինում «Հանրապետություն» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ էր՝ անդրադառնալով «Հանրապետություն» կուսակցության երեկվա հայտարարությանը, ըստ որի՝ ՀԱԿ-ի համամասնական ցուցակում ներկայացված են լինելու միայն ի դեմս Արամ Սարգսյանի՝ «Առավոտին» ասաց. «Անկախ այսօրվա իմ քաղաքական կարգավիճակից, «Հանրապետություն» կուսակցությունում են մեկտեղված իմ ամենալավ ընկերները, ովքեր անուրանալի ավանդ ունեն հատկապես արցախյան պատերազմում: Խորհրդարանական առաջիկա ընտրություններին կուսակցության պասիվ մասնակցության մասին հայտարարությունը իմ ընկերների քաղաքական կամքի, քաղաքացիական կեցվածքի խոսուն դրսեւորումն է: Այդպես կվարվեր Հայաստանի յուրաքանչյուր արժանապատիվ քաղաքացի, ով ականատեսն է մի իրականության, որի մի կողմում չբարեփոխվող իշխանությունն է, մյուս կողմում՝ բարեփոխման հետ չասոցացվող ընդդիմությունը:

Խորհրդարանական առաջիկա ընտրություններում ես իմ քվեն տալու եմ ՀԱԿ-ին բացառապես այն պատճառով, որ այդ ցուցակի 3-րդ համարում հանդիպելու եմ լուսավոր մի մարդու անվան: Հույս ունեմ, որ մի օր նախագահական ընտրություններում արժեւորված կհամարեմ իմ քվեն՝ քվեաթերթիկում տեսնելով Արամ Սարգսյանի անունը: Ես հավատարիմ եմ սպարապետ Վազգեն Սարգսյանի արժեքային համակարգին, քաղաքական ժառանգությանը»:

Օրինագիծը ոչ թե վիճահարույց է, այլ անթույլատրելի

Կառավարության տարած-ետբերած օրինագծի մասին ասում է պատգամավորը

Երեկ խորհրդարանում տեղի է ունեցել աշխատանքային խորհրդակցություն, որտեղ քննարկվել են ԱԺ 4-րդ գումարման 11-րդ նստաշրջանի օրակարգում լրացումներ կատարելու մասին եւ առաջիկա քառօրյա նիստերի օրակարգի մասին որոշումների նախագծերը: Դրանցից մեկով, որպես անհետաձգելի օրինագիծ, կառավարությունը ԱԺ առաջիկա նիստում քննարկման է ներկայացրել իր տարած-ետբերած «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրինագիծը, որը փետրվարի 9-ին կեղծված քվեարկության արդյունքում արդեն առաջին ընթերցմամբ ընդունվել էր: Կառավարությունն այն ետ էր կանչել՝ պատճառաբանելով, թե վիճահարույց այս օրինագիծը, որով օրինականացվում է բանակի մասնակցությունը երկրի ներքաղաքական պրոցեսներին, լրամշակման կարիք ունի: Այդ լրամշակումը կառավարությունը կայծակնային արագությամբ է կատարել. հիշեցնենք, որ վարչապետ Տիգրան Սարգսյանն օրինագիծը ետ էր կանչել փետրվարի 22-ի գրությամբ եւ արդեն երեկ կրկին ներկայացրել է խորհրդարանի քննարկմանը: Օրինագծում խորհրդարանական ընդդիմության եւ քաղաքական այլ ուժերի համար վիճահարույց 9-րդ հոդվածը լրամշակված տարբերակում, ըստ էության, որեւէ լուրջ փոփոխության չի ենթարկվել. մի դեպքում փոխվել է շարադասությունը, եւ «զինված անօրինական»-ը դարձել է «անօրինական զինված», եւ ավելացել է նաեւ հետեւյալ նախադասությունը՝ «Զինված ուժերի ներգրավումը պետք է առավելապես ուղղված լինի սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերով նշված խնդիրների իրականացմանը»: Մինչդեռ «Ազատություն» ռ/կ-ի հետ զրույցում ՀՀ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանի ասելով՝ օրինագծում երկու կարեւորագույն փոփոխություն է կատարվել: Մեկը, ըստ նրա, այն է, որ օրինագծի անցումային դրույթներում սահմանվում է, որ ՁՈՒ-ն արտակարգ դրության ժամանակ կարող է մասնակցություն ունենալ միայն հատուկ պատրաստություն անցնելուց հետո, երկրորդն այն է, որ արտակարգ դրության ժամանակ զինված ուժերի շփումը բնակչության հետ գրեթե պետք է բացառվի: Մասնավորապես, ըստ նրա, մի քանի զսպաշապիկներ՝

ՖՈՏՈԼՈՒՐ

արգելանքներ են սահմանվում զինված ուժերի եւ բնակչության շփումը կանխելու համար: Իհարկե, այս անգամ կառավարությունն օրինագիծը փաթեթով է ներկայացնելու ԱԺ, որովհետեւ, ըստ նախարարի, առաջին ընթերցմամբ ընդունվածի ետ կանչելու գլխավոր պատճառն այն էր, որ օրինագծում բացակայում էր այդ օրենքի դրույթների խախտման համար պատասխանատվություն նախատեսող օրինագիծը:

«Առավոտի» հետ զրույցում «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության քարտուղար Լարիսա Ալավերդյանն ասաց, թե փաթեթն ընդգրկում է նաեւ որոշակի փոփոխություններ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում: Արդյոք կատարված փոփոխություններն ու լրամշակումը էականորե՞ն են իրարից տարբերվում մասնավորապես վիճահարույց 9-րդ հոդվածի մասով, եւ արդյոք նոր օրինագիծը բավարարո՞ւմ է խմբակցության ակնկալիքները: Տիկին Ալավերդյանը նախ շհամաձայնեց «վիճահարուց» ձեւակերպման հետ՝ ասելով, որ դա «ոչ թե վիճահարույց, այլ անթույլատրելի օրինագիծ է»: Նա հայտարարեց, որ օրենքի նախագծում 9-րդ հոդվածից բանակին վերաբերող դրույթը կամ ընդհանրապես պետք է հանվի, կամ ոչ թե խմբագրվի, այլ ամբողջովին այլ կերպ շարադրվի՝ ինչպես պահանջում են միջազգային այլ փաստաթղթերը. «Մասնավորապես, նախեւառաջ պետք է հստակեցվի, որ բանակը որեւէ կերպ չպետք է շփման մեջ մտնի քաղաքացիների հետ, եւ միայն ծայրահեղ դեպքերում է, որ պետք է բանակին տրվեն հատուկ օբյեկտների պաշտպանությունն ու պահպանությունը՝ դրանով իսկ այդ պարտականությունից ազատելով ոստիկանական ուժերին, որպեսզի վերջիններս իրականացնեն այս օրենքից բխող մյուս գործողությունները»:

Մենք պատգամավորին հիշեցրինք, որ նախարարի հայտարարության համաձայն՝ բանակի «զորքերը չեն օգտագործվում, եթե ոստիկանության եւ Ազգային անվտանգության ուժերը դրա համար բավարար են, երկրորդը՝ եթե խնդիրը գնում է անկարգությունների եւ այլնի մասին, ապա այդտեղ ոստիկանությունը պետք է շփվի, եւ զինված ուժերը պետք է իրականացնեն հատուկ օբյեկտների պաշտպանություն: Եթե արտակարգ դրությունը պայմանավորված է նաեւ արտակարգ իրավիճակների՝ բնական աղետների հետ, ապա նրանք պետք է մասնակցեն մարդկանց տարհանմանը եւ այլն: Ամենածայրահեղ, վերջին փուլը կարող է լինել, որ նման բան լինի»: Արդյոք այս պարզաբանումը փարատո՞ւմ է «Ժառանգության» պատգամավորների մտահոգությունները, կամ ասել, որ օրինագիծն այս տեսքով համապատասխանում է Սահմանադրությանը: «Ես կրկնում եմ՝ պետք է ընդհանրապես բացառվի բանակի ներգրավումը ներքաղաքական բնույթի որեւէ գործողությունների: Մյուս կողմից՝ մեր մտահոգությունն այն է, որ մեր երկրում իրավակիրառական պրակտիկայում անգամ չնչին հնարավորությունը կամ սողանցքը, որ թողնվում է օրենքում, հետագայում բոլորովին այլ կերպ է կիրառվում եւ, ըստ հայեցողության, կամայական մեկնաբանությունների տեղիք է տալիս: Առավել եւս ընտրությունների ֆոնի ներքո դա դառնում է վտանգավոր»,- ասաց պատգամավորը:

Տարածված կարծիք է, թե այս օրինագծի ընդունումը պայմանավորված է առաջիկա ընտրություններով եւ հետընտրական հնարավոր զարգացումներով, ուստի հարցրինք՝ կարծում է, որ ԱԺ ընտրություններն այնքան մեծ լարում կարող են առաջացնել երկրում, որ այս օրենքի անհրաժեշտությունն իշխանությունը զգա՞: «Լարումը ոչ թե կառաջանա, այլ 2008-ից դեռ պահպանվում է: Լարումն առկա է, եւ ցանկացած խոշոր միջոցառում, իսկ ընտրությունները դրա թվին են պատկանում, կարող է լարվածության սրացման համատեքստում «վերջին կաթիլի» դեր խաղալ: Անշուշտ, անհանգստությունն այս առումով մնում է, առավել եւս, որ Արեւմուտքի կողմից «Մարտի 1»-ի էջը փակված համարելու մտադրությունից անկախ՝ մեր հասարակությունն այդ էջը դեռ չի փակել, քանի դեռ պատժված չեն այն անձինք, ովքեր մինչ օրս, լինելով մարդասպան, մնում են ազատության մեջ, ինչը իրավիճակը էլ ավելի ծանրացնում է»,- հայտարարեց Լարիսա Ալավերդյանը:

5 կամ 7 տոկոսանոց շեմը հաղթահարելու խնդիր չունեն

Մամուլում երեկ տեղեկություն էր հրապարակվել, թե «Ժառանգություն» եւ «Ազատ դեմոկրատներ» կուսակցություններն արդեն որոշել են, որ ԱԺ առաջիկա ընտրություններին մասնակցելու են միասնական ցուցակով: Բայց քանի որ, ըստ այդ տեղեկատվության, այդ կուսակցություններում հաշվարկել են, որ ընտրություններին դաշինքով մասնակցելու դեպքում դժվար է լինելու հաղթահարել ԱԺ մտնելու համար անհրաժեշտ 7%-անոց շեմը, ուստի որոշել են, որ «Ազատ դեմոկրատների» մի շարք անդամներ պետք է ընդգրկվեն «Ժառանգության» համամասնական ցուցակում: Թերթում ներկայացվել էր նաեւ այդ ենթադրյալ ցուցակի առաջին տասը տեղերում հանգրվանած քաղաքական գործիչների անունները եւ հերթականությունը:

Aravot.am-ի հետ զրույցում «Ազատ դեմոկրատներ» կուսակցության ղեկավար Խաչատուր Քոքոբելյանն ասաց, թե բազմիցս նշել են եւ երբեք չեն թաքցրել, որ շփումներ ունեն «Ժառանգություն» կուսակցության հետ, եւ որ միասին տարբեր խնդիրներ են քննարկում: Քոքոբելյանը փորձում էր ձեռնպահ մնալ որեւէ մեկնաբանություն անելուց՝ համարելով, որ «դա անհեթեթություն, մատից հոտ քաշելով հրապարակված տեղեկություն է ընդամենը, քանի որ ո՛չ առանձին-առանձին, ո՛չ դաշինքով եւ առավել եւս ո՛չ էլ նման միասնական ցուցակով մասնակցելու մասին որոշում դեռ չեն էլ կայացրել»:

Այդուհանդերձ, կուսակցության ղեկավարը վստահաբար ասաց, թե հրապարակված տեղեկությունն իրականությանը բացարձակապես չի համապատասխանում. «Ինչ վերաբերում է մեր եւ «Ժառանգության» միասնաբար հանդես գալուն, ապա այս պահին նման որոշում չկա, բայց կան երկուստեք ե՛ւ շփումներ, ե՛ւ քննարկումներ, եւ ես հույս ունեմ, որ դա կարող է դրական ավարտ ունենալ»:

Դիտարկմանը, թե՝ «Ազատ դեմոկրատներն» ու «Ժառանգությունը» հաշվարկել են, որ ընտրություններին դաշինքով մասնակցելու դեպքում ԱԺ մտնելու համար անհրաժեշտ 7%-անոց շեմը դժվար է լինելու հաղթահարել եւ որոշել են, որ «Ազատ դեմոկրատներն» ընդգրկվեն «Ժառանգության» ցուցակում, Քոքոբելյանն արձագանքեց. «Այն, որ թե՛ «Ազատ դեմոկրատները», թե՛ «Ժառանգությունը» 5 կամ 7 տոկոսը հաղթահարելու խնդիր չունեն ո՛չ առանձին-առանձին, ո՛չ էլ միասնական դաշինքով հանդես գալու դեպքում՝ մեր հանրությունն առաջիկայում կհամոզվի: Կարծում եմ՝ նման տեղեկություններ շրջանառելն այն նույն սեւ PR-ի, մեր վրա ցեխ շպրտելու շարքից է, որն իրականացվում է կուսակցության ձեւավորումից ի վեր»:

«Ժառանգություն» կուսակցության ներկայացուցիչ Արմեն Մարտիրոսյանն էլ հրապարակված տեղեկատվության վերաբերյալ կեսկատակ-կեսհեգնանքով ասաց, թե այդ տեղեկությունն «անմեկնաբանելի է». «Մենք ինչպե՞ս կարող ենք որոշել, թե մեր միասնական ցուցակն ինչպիսին կարող է լինել, եթե «Ազատ դեմոկրատների» հետ դաշինքով կամ առանձին հանդես գալու որոշում դեռ չենք ընդունել: Այդ տեղեկությունը նույնիսկ անմեկնաբանելի է, որովհետեւ ո՛չ կարող եմ հաստատել, ո՛չ ժխտել, որովհետեւ նման հարց չի քննարկվել»:

Ինչ վերաբերում է մասնավորապես «Ժառանգության» անցողիկությանը, ապա կուսակցության ներկայացուցիչն ասաց. «Ես վստահ եմ, որ «Ժառանգությունը» առանձին հանդես գալու դեպքում 5 տոկոսանոց շեմը կարող է հաղթահարել, դաշինք կազմելու դեպքում էլ՝ 7 տոկոսը»:

Համակարգային փոփոխությունների ծրագիր

ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը մեզ տեղեկացրեց, որ ՀՀԿ նախընտրական ծրագիրը լինելու է հենց այսպիսին

- Որքան մոտենում են ընտրությունները, այնքան ավելի են ակտիվանում խոսակցությունները կուսակցությունների ցուցակների, ընտրության գնալու ձեւերի եւ դիրքերի մասին: Հինգշաբթի տեղի ունեցած ՀՀԿ ԳՄ նիստում արդյոք քննարկվե՞ց կուսակցության համամասնական ցուցակը, եւ կարո՞ղ եք որոշ մանրամասներ ասել ցուցակի մասին:

- Սիրով, պաշտոնապես հայտարարեմ, որ Հանրապետական կուսակցության համամասնական ցուցակը գլխավորելու է Սերժ Սարգսյանը, եւ դժվար հասկացողների համար, ովքեր այլ բան էին ակնկալում, ասեմ, որ ցուցակը պետք է գլխավորի Սերժ Սարգսյանը, որովհետեւ կա դասական քաղաքական մոտեցում, ըստ որի՝ կուսակցությունների համամասնական ընտրական ցուցակները գլխավորում է կուսակցության լիդերը: Սերժ Սարգսյանը մեր առաջնորդն է, եւ մեր կուսակցության բոլոր բարեփոխումները կապված են նրա հետ, կուսակցությունը վճռական է՝ նախագահ Սարգսյանի գլխավորությամբ գնալ բարեփոխումների, գնալ առաջ եւ հաջողությունների հասնել առաջիկա ընտրություններում:

- Այլ մանրամասներ կասե՞ք կուսակցության ցուցակի մասին՝ ովքե՞ր են լինելու, ովքե՞ր չեն լինի ցուցակում, ովքե՞ր գոհ կլինեն եւ ովքե՞ր՝ դժգոհ:

- Թե ովքեր կլինեն եւ ովքեր չեն լինի՝ չասեմ, բայց ասեմ հստակ սկզբունքը, ըստ որի՝ կկազմվի կուսակցության ցուցակը: Կուսակցությունը շուտով ավարտուն տեսքի կբերի նախընտրական ծրագիրը, որը լինելու է համակարգային բարեփոխումների եւ փոփոխությունների ծրագիր, եւ կուսակցության ցուցակում կլինեն այն գործիչները, որոնք իրենց գաղափարական գործունեությամբ եւ կարողություններով պատրաստ կլինեն իրականացնել այդ բարեփոխումները թե գործադիր մարմնում եւ թե օրենսդիրում: Այլ սկզբունք չի կարող լինել: Սկզբունքը դրված է՝ ովքեր

կարող են իրականացնել բարեփոխումները, նրանք էլ կլինեն ցուցակում:

- Որոշ վերլուծություններ են արվում այն մասին, թե կուսակցության ցուցակը կազմվելու է ըստ որոշ գործիչների ունեցած քվոտաների, ամեն մեկի քվոտայի չափով, իրո՞ք կա նման բան:

- Ես ծանոթ եմ Ձեր նշած այդ, այսպես կոչված, վերլուծություններին եւ ուզում եմ ասել, որ դրանք պարզապես ծիծաղելի են, չկա նման բան եւ չի էլ կարող լինել: ՀՀԿ-ն կայացած քաղաքական ուժ է եւ ոչ թե ՍՊԸ, իսկ քվոտավորումը բնորոշ է հենց ՍՊԸ-ներին եւ այն քաղաքական ուժերին ու գործիչներին, որոնք առաջնորդվում են ՍՊԸ-ի տրամաբանությամբ: Առնվազն ծիծաղելի են այդ կարգի վերլուծությունները, եւ դրանց հեղինակները հաստատ քաղաքական իրողություններից դուրս են:

- ՀՀԿ ցուցակում կլինե՞ն անսպասելի անուններ, այսպիսիք, որոնք, երբ հայտնի կդառնան, հասարակությունը, մարդիկ կասեն՝ «այ քեզ արմանք-զարմանք» բան:

- Չեմ կարող ասել՝ անսպասելի, թե սպասելի կլինեն անունները, բայց մի բան հաստատ է՝ մեր կուսակցության ցուցակում կլինեն այն մարդիկ, որոնք վճռական են եւ կարող են իրականացնել բարեփոխումների գործընթացը՝ երկրի նախագահի գլխավորությամբ, կլինեն այն մարդիկ, ովքեր հավատում են եւ համոզված են, որ միայն երկրի նախագահի գլխավորությամբ եւ ՀՀԿ-ի հետ է հնարավոր իրականացնել համակարգային բարեփոխումները: Եվ, բնականաբար, կուսակցության նախագահն էլ հավատում է այդ մարդկանց եւ տեսնում է, որ նրանք կարող են բարեփոխումների ընթացքն առաջ տանել:

- Ի՞նչ սկզբունքով է կառուցվելու ցուցակի հերթականությունը, լինելո՞ւ են ՀՀԿ ցուցակում կուսակցության գործադիր մարմնի բոլոր անդամները, նախարարները, մարզպետները եւ այլ պաշտոնատար անձինք:

- Հիմնական սկզբունքը ես արդեն ասացի, այն հստակ է եւ լինելու է նույնը՝ ովքեր կարող են, ի զորու են բարեփոխումների տրամաբանության մեջ լինել, լինել նախընտրական ծրագրի տրամաբանության մեջ, նրանք էլ կլինեն ցուցակում: Իսկ թե կոնկրետ ովքեր կլինեն՝ սպասենք: Մենք համագումարից հետո կհրապարակենք մեր ցուցակը, եւ ամեն ինչ պարզ կլինի: Մի բան ուզում եմ անպայման հիշեցնել եւ շեշտել, այն է՝ Հանրապետականը երբեք չի գնացել ինքնանպատակ որոշումների եւ այսուհետ ես այդպես է լինելու:

- Ծեծված հարց եմ տալու՝ քանի՞ տոկոս ձայն, քանի՞ քվե է ակնկալվում ստանալ Հանրապետական կուսակցությունը խորհրդարանական ընտրություններում:

- Միայն մեկ օրինակ ներկայացնեմ. վերջերս տեղի ունեցան ՏԻՄ ընտրություններ, եւ 39 համայնքներից 31-ում հաղթանակ տարան Հանրապետականի ներկայացուցիչները, եւ սա հստակ վստահություն է ներշնչում, որ գալիք խորհրդարանական ընտրություններում հիմնական ֆավորիտը լինելու է ՀՀԿ-ն, ավելին՝ մեր գլխավոր խնդիրը, որպես քաղաքական իշխանություն, որպես թիվ մեկ պատասխանատու, լինելու է մեր երկրում ժողովրդավարական չափանիշներին ամբողջությամբ համապատասխանող ընտրությունների անցկացումը, եւ մենք ակնկալում ենք, եւ կան բոլոր շանսերը, որպեսզի այդ ժողովրդավարական չափանիշներին համապատասխանող ընտրություններում հաջողության հասնի Հանրապետական կուսակցությունը եւ լինի հիմնական ֆավորիտը:

- Իշխող քաղաքական ուժի՝ Հանրապետականի հասցեին հնչում են մեղադրանքներ, թե՝ ասում եք արդար եւ թափանցիկ ընտրություններ, սակայն եթե դրանք լինելու են այնպիսին, ինչպիսին եղան Հրազդանի քաղաքապետի ընտրության դեպքում, ապա դրանք, ըստ ընդդիմության որոշ ներկայացուցիչների, այնքան էլ թափանցիկ չէին:

- Հրազդանում եղան այնպիսի ընտրություններ, որ նույնիսկ Հայաստանում ԱՄՆ դեսպանը դրանք գնահատեց որպես ժողովրդավար եւ խոսեց նաեւ փաստերով: Ես կարծում եմ՝ սա արդեն վկայում է այն մասին, որ մեր միջազգային գործընկերներից՝ աշխարհի ամենահզոր տերություններից մեկի դեսպանը (իսկ մենք գիտենք, որ ԱՄՆ-ը երբեք ոչ մեկին, այսպես ասած, սիրուն աչքերի համար չի գնահատում) դրական գնահատեց Հրազդանի ընտրությունները: Սա հույս է ներշնչում, որ մենք կարող ենք իրոք նորմալ ընտրություններ անցկացնել: Եվ եթե ընդդիմությունը դժգոհ է եւ այլն, ապա մնում է միայն մեկ խորհուրդ տալ՝ եթե մենք ուզում ենք կառուցել ժողովրդավարական երկիր, իսկ մենք ուզում ենք կառուցել, ապա ժողովրդավարական երկրում ոչ թե օդում են խոսում, այլ փաստերով, որոնք էլ ներկայացնում են համապատասխան ատյաններ: Եթե չկան այդ փաստերը, մնացածն ավելորդ է:

Զրույցը վարեց

Հեռուստաընկերությունները ՀՌԱՀ-ից գաղտնի հրահանգ ստացե՞լ են

Երեկ Aravot.am-ը մարզային մի քանի հեռուստաընկերություններից հետաքրքրվեց՝ դուք ՀՌԱՀ-ից բանավոր հրահանգ ստացե՞լ եք, որ չլուսաբանեք կուսակցությունների քարոզարշավը: Հիշեցնենք, որ «Ժառանգություն» կուսակցությունը երեկ մի հաղորդագրություն էր տարածել, ըստ որի՝ իրենք մարզերից հավաստի տեղեկություններ են ստացել, որ խորհրդարանական մոտալուտ քարոզարշավի ժամանակ ՀՀ մարզային հեռուստաընկերություններին բանավոր հրահանգվել է չլուսաբանել կուսակցությունների քարոզարշավը: Ավելին՝ տեղական որոշ հեռուստաընկերություններ քարոզարշավը լուսաբանելու նպատակով մասնակցել են մրցույթների, շահել դրամաշնորհ, բայց հիմա նրանց արգելվում է այն իրականացնել:

Վանաձորի «Ֆորտունա» հեռուստաընկերության սեփականատեր Կարեն Արշակյանն այս առնչությամբ Aravot.am-ին վստահեցրեց, որ նման բան չի եղել. «Մենք չենք ստացել»: «Գեղամա մեդիահոլդինգի» կազմի մեջ մտնող «Քյավառ» հեռուստաընկերության տնօրեն Արմեն Գալստյանը նույնպես հավաստիացրեց. «Ոչ, մենք նման հրահանգ չենք ստացել: ՀՌԱՀ-ի հետ մենք վերջին անգամ 6 ամիս առաջ ենք հանդիպել: Համենայնդեպս, ես նման տեղեկություն չունեմ: Եթե «Գեղամա մեդիահոլդինգը» նման հրահանգ ստացած լիներ՝ ես անպայման կիմանայի, դա մեզ համար հետաքրքիր ոլորտ է, բնականաբար, մենք կիմանայինք»:

«Լոռի» հեռուստաընկերության տնօրեն Նարինե Ավետիսյանը մեզ հետ զրույցում ասաց, որ տեղյակ է, կարդացել է «Ժառանգության» տարածած հաղորդագրությունը: Նրա խոսքերով՝ «Ես դեռ նման հրահանգ չեմ ստացել: Մենք դեռ 10 օր ժամանակ ունենք, չէ՞, մենք դեռ նման հայտարարություն չենք ստացել: Ճիշտն ասած, սպասում եմ, որ առաջիկա օրերին թեմայի հետ կապված զարգացումներ կլինեն, հիմա դեռ ոչ մի բան չկա, մեզ դեռ չեն դիմել»: Մենք տիկին Ավետիսյանից հետաքրքրվեցինք՝ այսինքն՝ սպասո՞ւմ եք նման հրահանգի, նա պատասխանեց. «Լրագրողի հետ եք խոսում, ես ձեր հարցի իմաստը հասկանում եմ: Ո՞նց, սպասում եմ, սպասելը... ի՞նչ ասեմ: Չգիտեմ՝ սպասո՞ւմ եմ, թե՞ չէ»:

«Ցայգ» հեռուստաընկերության լրատվության բաժնի տնօրեն Նառա Մելքոնյանը նույնպես ասաց. «Ես այդպիսի հրահանգ չեմ ստացել»:

Նշենք, որ «Ժառանգությունը», ԵԺԿ անդամ լինելով, հիշեցնում է, որ Բրյուսելում ԵԺԿ-ին անդամակցած իշխող ՀՀԿ-ն ու ՕԵԿ-ը ստորագրել են Հոչակագիր ու ստանձնել մի շարք պարտավորություններ: Բացի այդ, «Ժառանգությունը» խոստանում է ՀՌԱՀ-ի այդ աղօրինի հրահանգի վրա հրավիրել միջազգային կառույցների եւ դիտորդական առաքելության ուշադրությունը:

ՀՌԱՀ-ից խոստացել են այդ հրահանգի հետ կապված մեզ մեկնաբանություններ տալ առաջիկայում:

Հ. ՁԵԲԵՁՅԱՆ

ИНГО АРМЕНИЯ
IngoArmenia

Մամուլի հաղորդագրություն

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» եւ «ԿԱՍԿԱԴ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ընկերությունները հայտնել են միավորվելու իրենց մտադրության մասին:

Միավորման նպատակն է հայաստանյան ապահովագրական ոլորտում ստեղծել առավել մեծ, ֆինանսապես հզոր եւ կայուն ընկերություն:

Միավորման արդյունքում վերակազմավորված ընկերությունը կունենա աննախադեպ լայն ու բարելավված սպասարկումով գործակալական ցանց, բարձր որակավորում ունեցող, փորձառու ապահովագրական մասնագետների հմուտ թիմ եւ կոնսոլիդացված ֆինանսական կայուն հիմք:

Միավորման գործընթացը սկսված է եւ ընթանում է ըստ նախատեսված ժամանակացույցի:

Գործարքի ընթացքը լրացուցիչ կլուսաբանվի սպասվող զարգացումներին համապատասխան:

ԻՆԳՈ Արմենիա եւ Կասկադ Ինշուրանս
ապահովագրական ընկերություններ

Ո՞վ է մեղավոր, որ տնտեսվարողը «տակ է տալիս»

«Առավոտի» փետրվարի 23 ի համարում տեղ գտած «ԲՀԿ-ն բարեգործություն է անում՝ տնտեսվարողին զցելով «փոսը» հոդվածում խոսք էր գնում այն մասին, որ Աբովյան քաղաքում Գագիկ Ծառուկյանի աջակցությամբ անվճար երթեւեկություն ապահովող փոխադրամիջոցները խաթարում են Աբովյան-Երեւան երթուղու աշխատանքը եւ ֆինանսական խոշընդոտներ են առաջացնում փոխադրող այլ տրանսպորտային միջոցների համար:

Սակայն Աբովյան քաղաքում չեն կիսում այդ հոդվածում տեղ գտած տեսակետները, եւ աբովյանցիներից շատերն այլ բան են ոնդում: Նրանք շեշտում են, որ տարիներ շարունակ զգացել են Գագիկ Ծառուկյանի հետեւողական աջակցությունը բոլոր ոլորտներում: Ինչ վերաբերում է անվճար փոխադրամիջոցներին, ապա արդեն ավելի քան տասը տարի է՝ ԲՀԿ նախագահի աջակցությամբ մայրաքաղաքում բարձրագույն կրթություն ստացող հազարավոր ուսանողներ ամեն օր անվճար երթեւեկելու հնարավորություն են ստացել:

Զրուցեցինք տասնյակ աբովյանցիների հետ: Ներկայացնում ենք նրանցից մի քանիսի խոսքերը.

- 800 դրամ փող է նստում Աբովյանից Երեւան, հիմա անվճար է, ուսանողների համար շատ լավ է: Էս ավտոբուսները ոչ միայն ուսանողների համար են, այլ նաեւ այն մարդկանց, ովքեր իսկապես չունեն գումար՝ Երեւան հասնելու եւ իրենց գործերը հոգալու համար:

- Ոչ միայն իմ, այլեւ բոլոր ուսանողների անունից եմ ուզում շնորհակալություն հայտնել: Յուրաքանչյուր հարց, յուրաքանչյուր խնդիր, որով դիմել ենք պարոն Ծառուկյանին, միշտ ստացել է իր լուծումը: Հենց այն փաստը, որ այսօր Աբովյան քաղաքում գործում է անվճար երթեւեկություն, դա մեծ խնդիր էր, որը ծառացել էր բոլոր ուսանողների առջեւ, այժմ ուսանողներն անվճար երթեւեկում են, ու ոչ միայն ուսանողները, այլեւ ողջ բնակչությունն օգտվում է դրանցից:

- Վերջին շրջանում Աբովյան քաղաքի տրանսպորտային փոխադրամիջոցների ուղեվարձի կրկնակի թանկացումը լուրջ մտահոգությունների ալիք էր առաջացրել աբովյանցիների շրջանում: Նրանք դիմեցին Գագիկ Ծառուկյանին՝ խնդրելով քաղաքում ավելացնել փոխադրամիջոցների քանակը եւ դրանով փոքր-ինչ թեթեւացնել իրենց՝ առանց այն էլ ծանր հոգսը: Այդ մտահոգությունն անարձագանք չմնաց, եւ հաշված օրերի ընթացքում խնդիրը լուծվեց:

- Պատահում էր՝ հացի փող չունեինք, հիմա թեկուզ 100 դրամը ավտոբուսին տալու փոխարեն՝ տալիս եմ, բուխանկա եմ առնում:

- Ամեն հարցով նա երկար տարիներ մեր կողքին ա՝ տանիքների, վերելակների, տրանսպորտի, դռների, ամեն հարցում պարոն Ծառուկյանը մեզ հետ է, մեր կողքին:

- Գոհ ենք, սրտացավ է, հոգատար է, ամեն հարցում մեր կողքին կանգնած է: Իմ հարեւանի տղեն պոլիտեխնիկում էր սովորում, ամեն առավոտ մի հարեւանի դուռը թակում էր, որ դրամ վերցներ՝ տրանսպորտի փող տար, բայց ես յոթ-ութ տարի է՝ պարոն Ծառուկյանն էդ հարցը վերցրել է իր վրա: Քի՞չ աջակցություն է դա:

- Քաղաքում շատ-շատ լավ բաներ է արել, Աբովյանն իր շնորհիվ ծաղկում է:

- Էդ վա՞տ է, որ ուսանողն անվճար գնում է դասի, որ հարազատը հարազատին գնում է տեսակցության: Շատ գովելի է:

- 200 դրամով գնում-հետ էինք գալիս, իսկ հիմա 800 դրամ է պետք, որ հասնենք Աբովյան քաղաք, ենթիսի վիճակում դրեցին մարդկանց, որ հիմա բոլորն էլ օգտվում են անվճարից:

- Չեմ կարծում, որ բարեգործությունը խաթարում է ինչ-որ փոխադրողների գործին, եւ պետք չի սեւացնել այն բարի գործը, որը կատարվում է սոցիալապես անապահովներին օգնելու համար: Եվ մի՞թե Աբովյանի ողջ բնակչությունը պետք է տուժի այն պատճառով, որ ինչ-որ տնտեսվարող վարկեր է վերցրել եւ չի կարողանում փակել այդ վարկերը:

Հասկանալի է, թե ինչու է Գագիկ Ծառուկյանի բարեգործությունն առաջացրել այլ փոխադրողի դժգոհությունը. չի կատարվում ուղեվարձի կրկնակի թանկացման արդյունքում սոցիալապես անապահով մարդկանց շնորհիվ սեփական վարկային պարտավորությունները մարելու նրա ցանկությունը:

ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

Հաստատվել է ԱԺ ընտրությունների ժամանակացույցը

Երեկվա արտահերթ նիստում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 6-ին կայանալիք հերթական ընտրությունների նախապատրաստման՝ անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը: Թեկնածուները փաստաթղթերը ներկայացնելու են մարտի 12-ից 22-ը: Ապրիլի 1-ից տեղի է ունենալու կուսակցությունների գրանցումը: Մինչեւ՝ ապրիլի 6-ը մենամասնականով առաջադրված թեկնածուները, ինչպես նաեւ՝ կուսակցությունները պետք է ներկայացնեն իրենց եկամուտների մասին հայտարարագրեր: Ապրիլի 8-ից մինչեւ՝ մայիսի 4-ը տեղի է ունենալու ԱԺ ընտրությունների քարոզարշավը: Ապրիլի 26-ից մինչ՝ մայիսի 3-ը տպագրվելու են քվեաթերթիկները: Մայիսի 5-ին կհայտարարվի ընտրողների վերջնական թիվը:

Շները եղնիկ են խեղդել

Երեկ Տավուշի մարզի Ոսկեպարի դպրոցի մերձակա տարածքում գյուղի շները խեղդել են Ոսկեպար մտած մոտ մեկ տարեկան եղնիկին: Շներն անտառի գեղեցկուհուն վնասվածքներ են հասցրել վզի եւ ազդրերի հատվածներում: Սատկած եղնիկին տեղափոխել են Նոյեմբերյանի անասնաբուժական տեղամաս: Ստեղծվել է հանձնաժողով՝ Նոյեմբերյանի ոստիկանության, անասնաբուժական եւ բնապահպանական տեսչությունների աշխատակիցների մասնակցությամբ: Հանձնաժողովը եղնիկի սատկելու պատճառի վերաբերյալ արձանագրություն է կազմել: Հանձնաժողովը եղնիկի մարմինը հրկիզելու է, մնացորդները հողին է հանձնելու: Սատկած կենդանու միսը որպես սնունդ չի օգտագործվելու. հավանական է, որ եղնիկի վրա հարձակված շների մեջ կարող էր լինել կատաղած շուն:

Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հիվանդի առողջությանը կհետեւեն հեռավորության վրա

«ՎիվաՍել-ՄՏՍ»-ը եւ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնի սրտաբանական կլինիկան՝ «Էրիքսոն Նիկոլա Տեսլա» ընկերության հետ համագործակցաբար, հայտարարեցին ընկերության անլար տեխնոլոգիաների վրա հիմնված «Mobile-Health» նախագծի պիլոտային կլինիկական գործարկման մասին: Այս մասին հայտնում են «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերությունից:

Այս լուծումը հնարավորություն է տալիս հեռավորության վրա հետեւել հիվանդի առողջությանը. կատարել համապատասխան չափումներ եւ արդյունքները փոխանցել մասնագետներին:

Զննումներն իրականացվում են որոշակի պարբերականությամբ կամ շարունակաբար եւ բջջային ցանցի միջոցով փոխանցվում են բուժող բժշկին: Հիվանդները համապատասխան չափումները կատարում են օգտագործման մեջ դյուրին սարքերի միջոցով, ինչպիսիք են, օրինակ, արյան ճնշման մոնիտորը կամ էլեկտրոկարդիոգրաֆը: Սարքերի կոմպլեկտն իր մեջ ներառում է օգտագործման մեջ դյուրին ավտոմատացված հաղորդակցման սարք, որը վերը նշված սարքերից՝ սենսորներից ստացվող տվյալները կուտակելով, Bluetooth միացմամբ «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի ցանցի միջոցով դրանք անվտանգ եւ ճշգրիտ կերպով փոխանցում է համակարգին եւ հատուկ սերվերին՝ բուժաշխատողներին թույլ տալով վերահսկել հիվանդի առողջական վիճակը: Տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը

կատարվում է համակարգչային հատուկ ծրագրի միջոցով:

«Mobile-Health» լուծումը կիրառվում է հիմնականում սրտաբանության եւ թոքաբանության մեջ: Ակնկալվում է, որ համակարգը կկիրառվի խրոնիկ հիվանդների եւ երկարատեւ հիվանդությունների բուժման, ինչպես նաեւ գյուղական շրջաններում եւ բարձրորակ հատուկ խնամք ապահովող բուժկենտրոններից հեռու բնակվող հիվանդների բուժման համար, հիվանդանոցից ժամկետից շուտ դուրս գրված կամ տնային, ինչպես նաեւ հետվիրահատական խնամքի կարիք ունեցող եւ այլ հիվանդների համար:

Ժամանակակից գլոբալ մարտահրավերներից մեկը խրոնիկ եւ երկարատեւ հիվանդություններով տառապող մարդկանց թվի աճն է՝ այդ թվում ասթմայի, շաքարախտի եւ այլ հիվանդությունների դեպքում: Ամեն տարի սրտանոթային հիվանդություններից մահանում է մոտ 17 միլիոն մարդ: Մյուս կողմից՝ աճում է մոլորակի ծեր (65+) բնակչության թիվը: Եթե 2007թ. 65 տարեկանից բարձր էր բնակչության 7%-ը, ապա 2025թ.-ին նրանց թիվը կկազմի 10%, իսկ 2050 թ.-ին՝ 16%:

«Mobile-Health»-ի առավելությունները թե հիվանդների եւ թե առողջապահության համակարգի համար անվիճելի են: Հերթական ստուգման համար ցանկացած վայրից ցանկացած պահի ստուգման հնարավորությունը նշանակում է գտնվել բժշկի հսկողության տակ՝ առանց բուժհիմնարկություն հասնելու անհրաժեշտության: Բացի այդ՝ «Mobile-Health»-ը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ կառավարել ժամանակն ու ռեսուրսները, առավել ճշգրիտ ախտորոշել եւ բուժել՝ նպաստելով հիվանդների կյանքի որակի բարձրացմանը:

«Mobile-Health»-ը «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի ներկայացրած հերթական նորարարական տեխնոլոգիան է, որի նպատակը մեր հայրենակիցների առողջապահական կարիքների բավարարումն է, ինչպես նաեւ խրոնիկ հիվանդությունների բուժման ծառայությունների համակարգի արդիականացումն ու բուժսպասարկման աշխարհագրական հասանելիության ապահովումը: «Mobile-Health»-ի շնորհիվ հիվանդները կկարողանան ստուգումներ անցնել տնային պայմաններում եւ ստացված տվյալները հատուկ բժշկական սարքավորման օգնությամբ «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի ցանցի միջոցով անմիջապես փոխանցել բժշկին, որն էլ իր հերթին կարող է հետեւել հիվանդի առողջությանը օնլայն եղանակով»,- նշեց «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

Հիշեցնենք, որ «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի 2G/3.75G ցանցերը ծառայում են հակակարկտային համակարգի, ինչպես նաեւ շտապօգնության համակարգի կապի ապահովման նպատակով:

Ա a r a v o t d a i l y
ՇԱԲԱԹ 25.02.2012

Արդյո՞ք բոլոր գործերով է վերականգնվում սոցիալական արդարությունը

Դատախազությունն ամփոփեց 2011 թվականը

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արամ Թամազյանի տեղեկացմամբ

Հարուցվել է 111 քրեական գործ, որից 49-ը՝ պետական շահերի պաշտպանության վարչության կողմից, ներկայացվել է 267 հայց՝ 2 մլրդ 213 մլն դրամի բռնագանձման պահանջով, որից քննվել եւ բավարարվել է 157 հայց՝ 984 մլն դրամ հայցագնով, մերժվել է 17 հայց, կարճվել՝ 22 գործի վարույթ, մյուսները դեռ չեն քննարկվել: Դատախազության ձեռնարկած միջոցառումների արդյունքում կամովին պետբյուջե է վերականգնվել 815 մլն դրամ: Բացի այդ, բերված հայցերով դատաքննության ընթացքում փաստացի վերականգնվել է 207 մլն դրամ:

Հայցերի հարուցման բնագավառում դրական ցուցանիշներ են արձանագրվել Լոռու (հարուցվել է 37,9 մլն դրամ հայցագնով 34 հայց), Գեղարքունիքի (հարուցվել է 14,6 մլն դրամ հայցագնով 33 հայց), Կոտայքի (հարուցվել է 24 մլն դրամ հայցագնով 4 հայց), Արագածոտնի (հարուցվել է 125,3 մլն դրամ հայցագնով 6 հայց) մարզերի եւ Երեւան քաղաքի (հարուցվել է 33,9 մլն դրամ հայցագնով 4 հայց) դատախազությունները: Միաժամանակ պետք է նկատել, որ պետական շահերի պաշտպանության ոլորտում դատախազական մարմինների արձանագրած դրական ցուցանիշների զգալի մասը շարունակում է, նախկինի պես, բաժին ընկնել պետական շահերի պաշտպանության վարչությանը: Այսպես՝ 2011թ. ընթացքում պետական շահերի պաշտպանության բնագավառով հարուցված քրեական գործերով մինչդատական վարույթի ընթացքում վերականգնված 108 մլն դրամից 84 մլն դրամը կամ 78 տոկոսը վերականգնվել է վարչության կողմից, կամովին վերականգնված 815 մլն դրամից 356 մլն դրամը կամ 43,7 տոկոսը եւս վերականգնվել է վարչության աշխատանքների արդյունքում:

«Արձանագրվել են մի շարք խախտումներ ու բացթողումներ, մասնավորապես՝ առանձին դեպքերում չեն պահպանվել «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին», «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքների եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ անհրաժեշտ հետեւողականություն չի ցուցաբերվել դատական ակտերի կատարման բնագավառում, մի շարք դեպքերում պետությանը գույքային վնաս պատճառելու վերաբերյալ եւ հանցագործության հատկանիշներ պարունակող նյութերն ու ստուգման ակտերը չեն ուղարկվել իրավասու մարմիններին՝ քրեաիրավական գնահատական տալու համար»,- ասաց Ա. Թամազյանը՝ նշելով, որ ուսումնասիրությունների արդյունքներով հարուցվել է 11 քրեական գործ, որոնցով պետությանը պատճառված վնասը կազմել է 119 մլն դրամ: Պետությանը պատճառված վնասը կամովին վերականգնելու մասին նախազգուշացվել է 12 անձ, որի արդյունքում կամովին ՀՀ պետական բյուջե է վերականգնվել 279 մլն դրամ: Նախապատրաստված նյութերով դատարան է հարուցվել 4 հայց՝ հօգուտ ՀՀ պետական բյուջեի 19,5 մլն դրամ բռնագանձելու պահանջով, համայնքների բյուջեներ են վճարվել տեղական տուրքի, գույքահարկի եւ վարձավճարների 57 մլն դրամ գումարներ: Արձանագրված խախտումներն ու թերությունները քննարկվել են նախարարության համապատասխան պաշտոնատար անձանց մասնակցությամբ եւ այդպիսիք վերացնելու համար հաղորդում է ուղարկել ՀՀ Ֆինանսների նախարարին:

Գլխավոր դատախազի տեղակալն անդրադարձավ նաեւ պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ընթացքում արձանագրված թերացումներին: ՔԿՀ-ներում շարունակում է մեծ թիվ կազմել արգելված իրերի եւ առարկաների շրջանառությունը: *«Ռեժիմային միջոցառումների արդյունքում հայտնաբերվել եւ առգրավվել են 3786 միավոր կտրող-ծակող գործիք, 3171 բջջային հեռախոս: Ներքին կանոնակարգը խախտելու համար 1090 դատապարտյալների նկատմամբ որոշես տույժ է նշանակվել պատժախցում պահելը»,-* նկատեց Ա. Թամազյանը՝ ավելացնելով. *«զգալի անելիքներ կան այլընտրանքային պատիժների կատարման, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման, ուղղիչ հիմնարկի տեսակը որոշելու, այն փոփոխելու աշխատանքներում»:* Որպես դատախազության սկզբունքայնության եւ հետեւողականության դրական արդյունք նշվեց արտերկրից առանձնապես ծանր հանցագործություններ կատարած անձանց պատժի հետագա կրման նպատակով ՀՀ փոխանցելու դեպքերի նվազումը, եւ այդ ճանապարհով պատիժների համապատասխանեցման անվան տակ անհամեմատ մեղմ պատիժներ սահմանելու արատավոր երեւույթների բացառումը: Փոխարենը՝ որոշակի քննադատություն հնչեցվեց նաեւ դատական ակտերի կապակցությամբ: Արդյոք բոլոր գործերով է վերականգնվում սոցիալական արդարությունը՝ սահմանելով կատարված հանցագործությանը համարժեք պատիժները, հռետորական հարց հնչեցրեց գլխավոր դատախազի տեղակալը եւ ինքն էլ պատասխանեց. *«Հենց միայն «Քրեյզի հորս» ռեստորանային համալիրում խուլիգանության հայտնի գործով ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 3-րդ մասով մեղադրվող ավելի քան 30 անձանցից ոչ մեկին ազատազրկման չդատապարտելու մասին դատական ակտերը եւ նրանց վերահաստատումները վերադաս դատական ատյանների կողմից վկայում է, որ արդարադատություն իրականացնող մարմնի կողմից ոչ համարժեք պատիժներ սահմանելով չի ապահովվել պատժի նպատակներից եւ ոչ մեկը, այն է՝ ոչ սոցիալական արդարության վերականգնումը, ոչ հանցանք կատարած անձի ուղղումը, ոչ էլ նոր հանցագործությունների կանխումը»:*

Մարդու դեմ ուղղված հանցագործությունները

Մնացական Սարգսյանն ասաց, որ 19-ով ավելացել են սպանության դեպքերը: Ցուցահեռ՝ վատթարացել է նաեւ բացահայտման ցուցանիշը: *«Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ դատախազների կողմից անհրաժեշտ խորությամբ վերլուծության չեն ենթարկվել տարածքներում արձանագրված՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների կառուցվածքն ու շարժընթացը: Հատկապես չեն ձեռնարկվել այդ բնույթի հանցագործությունների աճը կանխելուն ուղղված համարժեք միջոցներ, չեն վերլուծվել, թե մարզի կամ վարչական շրջանի որ տեղամասերում են այս բնույթի առավել շատ դեպքեր արձանագրվել, չեն պարզվել, թե ինչ ընդհանրություններ կան այս բնույթի հանցագործություններ կատարած անձանց, տուժողների եւ հանցանք կատարելու շարժառիթների հարցում, թե տարածքային ոստիկանության մարմինները ինչ միջոցառումներ են ձեռնարկել, այս հանցագործությունների կանխմանն ուղղված, նաեւ նախականխման աշխատանքներում թերացած ոստիկանության ստորաբաժանումներին միջնորդագրեր չեն գրվել»,-* ընդգծել է Մ. Սարգսյանը: Իսկ քրեական գործով նախաքննության, օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման աշխատանքներում տեղ գտած բացթողումները վերացնելու անհրաժեշտության մասին ՀՀ ոստիկանության պետին, ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության պետին ներկայացվել է 5 միջնորդագիր: Արդյունքում՝ որոշ ստորաբաժանումների պետեր եւ ծառայությունների ղեկավարներ նախազգուշացվել են, իսկ ծառայողական քննության արդյունքներով ՀՀ ոստիկանության 13 աշխատակից ենթարկվել է կարգապահական տույժի: Ըստ Մ.Սարգսյանի, բավարար չէ քննիչների մասնագիտացման խնդիրները տարածքային քննչական ստորաբաժանումներում, որտեղ գրեթե բացակայում է աշխատանքի առարկայական-մասնագիտական սկզբունքով բաժանումը:

Փոխարենը դրական գնահատվեց թրաֆիքինգի դեմ տարվող պայքարը: Քննվել է 17 քրեական գործ՝ նախորդ տարվա 13-ի դիմաց: Դատարաններում քննված 8 քրեական

գործով դատապարտվել է 12 անձ, 6 քրեական գործով դատաքննությունը շարունակվում է, միայն մեկ քրեական գործով անցնում է 8 մեղադրյալ: Այս բնագավառում դատախազության հետեւողական աշխատանքների շնորհիվ վերջին 4 տարվա ընթացքում գրանցվել են դրական արդյունքներ: *«Պետք է նշել դատախազության, ոստիկանության, միջազգային եւ հասարակական կազմակերպությունների համագործակցված աշխատանքը, որի շնորհիվ ՀՀ քրեական օրենսգրքում կատարվեցին փոփոխություններ, եւ այսօր մեր օրենսդրությունը համապատասխանում է միջազգային չափորոշիչներին ներկայացվող պահանջներին»,-* ասաց Մ.Սարգսյանը: Վիճակագրությունը չի փոխվել ավազակային հարձակումների հանցատեսակում՝ 2010 եւ 2011թվականներին արձանագրվել է 106-ական դեպք: Փոփոխության չեն ենթարկվել նաեւ բացահայտման ցուցանիշները (67,9-67,3): *«Թեպետեւ ավազակային հարձակումների շարժընթացը վերջին երկու տարիներին փոփոխություններ չի ենթարկվել, այդուհանդերձ, անցյալ տարի արձանագրվեցին ավազակային հարձակման մի շարք դեպքեր, որոնց վերլուծությունը ցույց տվեց, որ Երեւան քաղաքում գործում է կայուն ավազակախումբ եւ կատարված հանցագործություններն էլ համընկնում էին իրենց եւ կատարման եղանակներով: Նմանատիպ ձեռագրով կատարված 6 դեպք չէր բացահայտվել: ՀՀ գլխավոր դատախազի ցուցումով վերը նշված քրեական գործերը միացվեցին մեկ վարույթ եւ 23.09.2011թ. ավազակախումբը վնասազերծվեց, նախաքննությունը դեռեւս շարունակվում է»,-* նշեց բանախոսը եւ, վերլուծելով վերջին տարիներին ավազակային հարձակումներով հարուցված քրեական գործերը, կարծիք հայտնեց, որ նպատակահարմար կլինի այդ գործերը քննվեն մեկ քննչական մարմնի կողմից՝ կամ Ոստիկանության քննչական գլխավոր վարչության, կամ Երեւան քաղաքի քննչական վարչության կողմից, նկատի ունենալով, որ 106 դեպքից 70-ը կատարվել է Երեւան քաղաքում:

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների աճ

Արձանագրվել է 216 դեպքով կամ 24%-ով: Աճը դրսեւորվել է նաեւ կեղծ փողեր պատրաստելու եւ իրացնելու դեպքերի հաշվին՝ 2011թ. 186 դեպքով ավելի, քան նախորդ տարի: 280 դեպքից բացահայտվել է ընդամենը 14-ը, բացահայտումը կազմել է 5%: Այս ցուցանիշը գլխավոր դատախազը խիստ բացասական գնահատեց: *«Այսինքն՝ 280 դեպքից 266-ը մնացել է չբացահայտված, եւ սա այն դեպքում, երբ պարզվել է դրանց պատրաստման եղանակը, այն է՝ ձուլման եղանակով: Այսինքն՝ կա մի արտադրամաս, որտեղ ձուլման եղանակով պատրաստում են մետաղադրամներ եւ իրացնում: Եվ շատ վատ է, որ այս փոքրիկ Հայաստանում չենք կարողանում գտնել այդ արտադրամասը: Իսկ, եթե դրանք պատրաստվում են արտերկրում ու հետո տեղափոխվում Հայաստան, ապա դա կրկնակի վատ է, քանզի գործ ունենք նաեւ մաքսանենգության հետ: Ստացվում է՝ մեկ այլ երկրում պատրաստվում են կեղծ հայկական մետաղադրամներ՝ դրանք իրացնելով Հայաստանում: Սա ուղղակի վտանգում է մեր տնտեսությունը»,-* հայտարարեց ՀՀ գլխավոր դատախազը՝ պահանջելով պատկան մարմիններից առավել ակտիվացնել բացահայտմանն ուղղված աշխատանքները: Ի դեմ՝ ՀՀ գլխավոր դատախազը որոշակի դժգոհություն հայտնեց հատկապես կաշառակերության դեպքերի բացահայտման ցուցանիշի կապակցությամբ, թեեւ 2011 թվականի՝ 2010 թվականի համեմատությամբ, նկատվել է դրական տեղաշարժ, իսկ 2010 թվականին էլ դրական տեղաշարժ էր գրանցվել 2009-ի համեմատությամբ: Ասել է թե՝ դրական քայլեր արվում են, սակայն, ըստ գլխավոր դատախազի, դրանք չի կարելի գոհացուցիչ համարել: Եվ խոսքն ուղղելով թերեւս առավելապես օպերատիվ-որոնողական աշխատանքներ իրականացնող մարմիններին՝ գլխավոր դատախազն ասաց. *«Վիճակագրական տվյալների համաձայն՝ 2011 թվականին արձանագրվել է կաշառակերության 70 դեպք: Ճիշտ է, 2010 թվականի համեմատությամբ գրանցվել է որոշակի դրական տեղաշարժ, աճ, սակայն ոչ մեկի չեք կարող համոզել, որ ամբողջ տարվա ընթացքում եղել է ընդամենը կաշառակերության 70 դեպք: Ինքնախաբեությամբ զբաղվել պետք չէ»:* Ապա՝ հանձնարարեց գլխավոր դատախազի տեղակալ Ա.Դանիելյանին՝ 2012 թվականին շարունակել փնջային խորհրդակցությունների անցկացումը՝ վեր հանելու եւ հրապարակային քննարկելու առկա խնդիրները, իրավապահ մարմինների թերացումներն ու բացթողումները, ձեռքբերումները:

Միջազգային համագործակցությունը

Դատելով վիճակագրական տվյալներից՝ դատախազությունը լիովին հնտեգրվել է միջազգային հանրության մեջ: ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Դանիելյանի ներկայացմամբ՝ 2011 թվականին ԱՊՀ եւ օտարերկրյա պետությունների կողմից ստացվել է քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին 104 միջնորդություն՝ 2010 թվականի 76-ի փոխարեն: Իսկ ԱՊՀ մասնակից-պետությունների դատախազություններ ուղարկվել է քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու 46 (նախորդ տարվա ընթացքում՝ 22), այլ օտարերկրյա պետություններ 51 միջնորդություն (նախորդ տարվա ընթացքում՝ 27): Այլ խոսքով՝ Հայաստանի դատախազությունը 2011 թվականին ուղարկել է իրավական օգնության 97 միջնորդություն՝ նախորդ տարվա 49 միջնորդության փոխարեն. շուրջ կրկնակի ավել: *«Ամփոփումը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետության դատախազության միջազգային-իրավական գործունեությունը ակտիվ կերպով ծավալվում է նաեւ ԱՊՀ մասնակից-պետությունների տարածքից դուրս, ընդգրկելով եվրոպական բազմաթիվ երկրներ, որոնց հետ մինչ այդ համագործակցություն չի տրամադրվել եւ չի հայցվել»,-* նշեց Ա.Դանիելյանը: Հաշվետու ժամանակահատվածում օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել է նրանց իրավապահ մարմինների կողմից հետախուզվող եւ Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված անձանց վերաբերյալ 30 միջնորդություն, որից 23-ը ԱՊՀ մասնակից-պետությունների, իսկ 7-ը օտարերկրյա պետության իրավասու մարմիններից: Ստացված 30 միջնորդություններից 6-ը բավարարվել է, հիմնականում քաղաքացիության հիմքով մերժվել է 10 միջնորդություն, 7-ը ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն, իսկ 7-ը գտնվում է քննարկման փուլում: Բաժնում 2011 թվականի ընթացքում հաղորդում է ստացվել ՀՀ-ում հայտնաբերված այլ երկրների կողմից հետախուզվող 109 անձի վերաբերյալ:

ՀՀ Գլխավոր դատախազություն

Սկիզբը 187, 192, 197, 202, 207, 212, 217, 222, 227, 232, 237, 242, 247, 5, 10, 15, 20, 25, 30-ում:

Գլուխ քսաներորդ

ՌՈՒՍԵՐԵՆ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ

Եվ Լիոոն մի քիչ մտածեց ու Զավախյանին ասաց՝ «փաստորեն, դու ես ինձ ձեռ առնում», եւ Զավախյանը հարցրեց՝ «ի՞նչ իմաստով եմ ձեռ առնում», եւ Լիոոն ժոտալով պատասխանեց ու ասաց՝ «ամենագիտության իմաստով», եւ Զավախյանը ժոտալով Լիոոյին ասաց՝ «ամենագետ ըլնելդ աշխարհին ա հայտնի» եւ մի քիչ մտածեց ու ժոտալով ավելացրեց՝ «բայց բախտդ չի բերել», եւ Լիոոն ժոտալով հարցրեց՝ «ինչի՞ չի բերել», եւ Զավախյանը ծիծաղելով ասաց՝ «ամենագիտության գծով Նոբելյան մրցանակ չկա», եւ Լիոոն մի քիչ մտածեց ու ժոտալով ինձ ասաց՝ «Նոբելյանը մենակ համեստներին են տալիս» եւ մի քիչ էլ մտածեց ու ժոտալով ավելացրեց՝ «նախ համեստ պիտի ըլնես, հետո՝ գրող, հետո՝ շնողնեցի, հետո՝ արծաթավաճառ, հետո՝ ձեռնբաց ու մաղարիչ անող», եւ ես ժոտալով Լիոոյին հարցրի՝ «էդ բաները որտեղի՞ց գիտես», եւ Լիոոն մի քիչ մտածեց ու միանգամայն լուրջ ասաց՝ «իրանց կանոնադրության մեջ ա գրած», եւ Զավախյանը ժոտալով Լիոոյին ասաց՝ «էս թեմայով որ լուրջ ես խոսում, աչքիս բարձրանում ես», եւ Լիոոն փոթկացնելով ասաց՝ «էդ Նոբելյանի կանոնադրությունն ընենց են գրել, որ Զավախանց Լյովիկից բացի ուրիշ ոչ մեկը շանս չունենա», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժոտալով Լիոոյին ասաց՝ «ոնց գցում-բռնում եմ, լրջությունը քեզ ավելի ա սազ գալի» եւ մի քիչ էլ մտածեց ու լրջանալով Լիոոյին հարցրեց՝ «հենց գիտես թե՝ էդ մրցանակը ստացողնին սաղ ինձնից մեծն է՞ն» եւ մի քիչ էլ մտածեց ու ավելի լրջանալով ավելացրեց՝ «մեջներն ինձանի թուլերն էլ կան», եւ ես ժոտալով հարցրի՝ «էդ սաղին կարդացել է՞ս», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «որոշ չափով», եւ Լիոոն ծիծաղելով ասաց՝ «հատկապես իրանից թուլերին ա կարդացել», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու մտահոգ ասաց՝ «ըսենց ասում, խոսում ու հանաք ենք անում, բայց ամենակարեւորը մոռանում ենք», եւ Լիոոն ժոտալով հարցրեց՝ «ամենակարեւորը ո՞րն ա», եւ Զավախյանը միանգամայն լուրջ պատասխանեց ու ասաց՝ «ամենակարեւորն էն ա, որ մեր հայերին վաբշե Նոբելյան մրցանակ չի հասնում», եւ Լիոոն հարցրեց՝ «ինչի՞ չի հասնում» եւ Զավախյանը ժոտալով ասաց՝ «էդ արդեն դու պիտի իմանաս. ամենագետը դու ես» եւ մի քիչ մտածեց ու ավելացրեց՝ «թե չէ՝ որ ուզենան հայերից մեկնումեկին Նոբելյան մրցանակ տան, հեշտուհանգիստ թեկնածու կգտնեն», եւ Լիոոն ժոտալով Զավախյանին ասաց՝ «քեզնից լավ թեկնածո՞ւ», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու Լիոոյին ասաց՝ «ավելի լավ կանես՝ էդ ասածիս վրա մի քիչ մտածես», եւ Լիոոն հարցրեց՝ «ո՞ր ասածիդ վրա», եւ Զավախյանն ասաց՝ «էդ որ ասում եմ՝ հայերին Նոբելյան չի հասնում», եւ Լիոոն մի քիչ մտածեց ու ասաց՝ «ասենք թե չի հասնում. ե՞ս ինչ մեղք ունեմ», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «ամեն մինս էլ մեղքի մեր բաժինն ունենք», եւ Լիոոն մի քիչ մտածեց ու ժոտալով Զավախյանին հարցրեց՝ «օրինակ, քո մեղքը ո՞րն ա, համեստ ջան», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու միանգամայն լուրջ ասաց՝ «որ ճիշտն ուզում ես իմանաս, իմ մեղքը հենց համեստությունն ա», եւ Լիոոն ժոտալով հարցրեց՝ «այսինքն», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «այսինքն, ես էլ եմ քո պես իմ Նոբելյանի հարցին անլուրջ վերաբերվում», եւ Լիոոն զարմացած հարցրեց՝ «քեզ ո՞վ ասեց, որ ես քո Նոբելյանի հարցին անլուրջ եմ վերաբերվում», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու մտահոգ ասաց՝ «դու ինձանի լավ գիտես, որ էդ ընտենց ա» եւ մի քիչ էլ մտածեց ու մտահոգ ավելացրեց՝ «էդ ասածս ոչ թե կոնկրետ իմ մրցանակին ա վերաբերվում, այլ՝ ամբողջ ազգին», եւ Լիոոն մի քիչ մտածեց ու Զավախյանին ասաց՝ «պարզ խոսա՝ բան հասկանանք», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու սրտնեղած ասաց՝ «սրանից ավելի պարզ ո՞նց ասեմ» եւ մի քիչ էլ մտածեց ու սրտնեղած ավելացրեց՝ «ամենագետ մարդ ես, բայց էդ հասարակ բաները չես հասկանում», եւ Լիոոն հարցրեց՝ «ի՞նչը չեմ հասկանում», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու մտահոգ ասաց՝ «չես հասկանում, որ մինչեւը մենք մեզ լուրջ չվերաբերվենք, ուրիշները լուրջ չեն վերաբերվի», եւ Լիոոն մի քիչ մտածեց ու հարցրեց՝ «լուրջ չվերաբերվելը ո՞րն ա», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու հոգոց հանելով ասաց՝ «լուրջ չվերաբերվելն էդ հասարակ բաները չհասկանալն ա», եւ Լիոոն հարցրեց՝ «ո՞ր հասարակ բաները», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «մի քանի հազար տարեկան գիտություն ու մշակույթ ունեցող ազգի համար էդ Նոբելյան կոչվածն առանձնապես մեծ բան չի» եւ մի քիչ էլ մտածեց ու ավելացրեց՝ «էդ իրանց ա պատիվ, որ Նարեկացի ունեցող ազգն էդ մրցանակից ունենա», եւ Լիոոն հարցրեց՝ «ո՞ւմ ա պատիվ», եւ Զավախյանը պատասխանեց ու ասաց՝ «էդ մրցանակը տվողներին», եւ Լիոոն մի քիչ մտածեց ու խորամանկ ժոտալով Զավախյանին ասաց՝ «էրեւում ա՝ հույսդ լրիվ կտրել ես», եւ Զավախյանը զարմացած հարցրեց՝ «ինչի՞ց եմ հույսս կտրել», եւ Լիոոն պատասխանեց ու ասաց՝ «Նոբելյան մրցանակից», եւ Զավախյանն ավելի զարմացած հարցրեց՝ «ինչի՞ց ենթադրեցիր, որ հույսս կտրել եմ», եւ Լիոոն մի քիչ մտածեց ու ասաց՝ «զգացել եմ», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժոտալով հարցրեց՝ «էդ ե՞րբ եմ հույս ունեցել, որ հիմի էլ կտրեմ», եւ Լիոոն մի քիչ մտածեց ու ասաց՝ «ինձ թվում էր՝ ունես» եւ մի քիչ էլ մտածեց ու ժոտալով ավելացրեց՝ «ինձ միշտ թվացել ա, որ քեզ լափ էլ արժանի ես համարում էդ մրցանակին», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժոտալով ասաց՝ «շատ էլ ճիշտ ես զգացել» եւ մի քիչ էլ մտածեց ու ժոտալով ավելացրեց՝ «որ արժանի եմ համարում, էդ չի նշանակում թե՝ էդ մրցանակի հետ կապված հույսեր եմ փայփայում», եւ Լիոոն խորամանկ ժոտալով հարցրեց՝ «բայց ինչի՞ չպիտի հույսեր փայփայես», եւ Զավախյանը զննող հայացքով բավական երկար նայեց Լիոոյին ու հարցրեց՝ «ինձ լրիվ ե՞ս գժի տեղ դրել, ադա», եւ Լիոոն զարմացած հարցրեց՝ «ինչի՞ եմ գժի տեղ դրել», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «ես որ ասում եմ՝ հայերին Նոբելյան չի հասնում, ո՞նց կարող ա էդ մրցանակի իմաստով հույսեր փայփայեմ» եւ մի քիչ էլ մտածեց ու Լիոոյին հարցրեց՝ «ես կարող ա՞ հայ չեմ», եւ Լիոոն մի քիչ մտածեց ու ծիծաղելով ասաց՝ «հայ ես», եւ Զավախյանը զարմացած հարցրեց՝ «բա խի՞ ես ծիծաղում», եւ Լիոոն մի քիչ մտածեց ու ժոտալով Զավախյանին ասաց՝ «մի վախտ ասում էիր, որ մեջդ վրացական արուն կա», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «հորական կողմի ազգուտակիս մեջ վայ թե վրացի էղել ա» եւ մի քիչ էլ մտածեց ու ավելացրեց՝ «անցյալ դարերում» եւ մի քիչ էլ մտածեց ու ասաց՝ «բայց էդ մի քանի կաթիլ վրացական արունը չի կարա դեր խաղա», եւ Լիոոն մի քիչ մտածեց ու ծիծաղելով ասաց՝ «կարող ա լավ էլ դեր խաղա», եւ Զավախյանը հարցրեց՝ «ի՞նչ առումով», եւ Լիոոն փոթկացնելով պատասխանեց ու ասաց՝ «Նոբելյան մրցանակի առումով», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժոտալով Լիոոյին ասաց՝ «մոռանում ես, որ վրացոնց էլ Նոբելյան չի հասնում», եւ Լիոոն զարմացած հարցրեց՝ «ի՞նչ գիտես, որ չի հասնում», եւ Զավախյանը բավական երկար մտածեց ու ասաց՝ «որ հասնելիս ըլներ, գոնե մի անգամ ստացած կըլնեին» եւ մի քիչ էլ մտածեց ու ավելացրեց՝ «մանավանդ որ՝ իրանք մեզանի հազար անգամ շուստրի են» եւ մի քիչ էլ մտածեց ու ասաց՝ «համ էլ՝ մեզանի հազար անգամ կամեցող են», եւ Լիոոն հարցրեց՝ «ի՞նչ իմաստով են կամեցող», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «իրար նկատմամբ չկամ չեն», եւ Լիոոն հարցրեց՝ «մենք իրար նկատմամբ չկամ ե՞նք», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «դու ինձանի լավ գիտես» եւ մի քիչ էլ մտածեց ու ավելացրեց՝ «ուղղակի շուն ես հաշացնում», եւ Լիոոն մի քիչ մտածեց ու ժոտալով Զավախյանին հարցրեց՝ «ես կարող ա՞ Նոբելյան ստանալդ չեմ ուզում» եւ մի քիչ էլ մտածեց ու հարցրեց՝ «թե՞ Արմենը չի ուզում», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժոտալով ասաց՝ «պարզ ա, որ երկուսդ էլ կուզեք» եւ մի քիչ էլ մտածեց ու ծիծաղելով ավելացրեց՝ «որովհետեւ իմ Նոբելի առումով երկուսդ էլ շահագրգռված անձ եք», եւ Լիոոն մի քիչ մտածեց ու ասաց՝ «ճիշտ ես ասում. շահագրգռված ենք, որ մեր համեստ ախոյերը Նոբելյան մրցանակի լաուրեատ դառնա», եւ Զավախյանը խորամանկ ժոտալով ասաց՝ «ուրիշ առումով էլ եք շահագրգռված», եւ Լիոոն զարմացած հարցրեց՝ «ուրիշ ի՞նչ առումով ենք շահագրգռված», եւ Զավախյանը խորամանկ ժոտալով պատասխանեց ու ասաց՝ «զուտ նյութական առումով», եւ Լիոոն մի քիչ մտածեց ու հարցրեց՝ «մաղարիչը նկատի ունե՞ս», եւ Զավախյանը փոթկացնելով ասաց՝ «ձեր քսան տոկոսնին նկատի ունեմ», եւ Լիոոն ժոտալով ասաց՝ «մեր քսան տոկոսների մասին լրիվ մոռացել էի», եւ Զավախյանը փոթկացնելով ասաց՝ «ինչքան մոռանաք՝ ենքան իմ օգուտն ա», եւ Լիոոն մի քիչ մտածեց ու ժոտալով Զավախյանին ասաց՝ «մեր էդ քսան տոկոսների հաշվով հանաք ենք անում», եւ ես ժոտալով Լիոոյին ասացի՝ «դու քո անունից խոսա. ես հեչ էլ հանաք չեմ անում», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «կարեւորն էն ա, որ ե՛ս հանաք չեմ անում» եւ մի քիչ էլ մտածեց ու ժոտալով ավելացրեց՝ «ձեր էդ քսան տոկոսնին, փաստորեն, ձեր հալալ քրտինքով եք վաստակել», եւ Լիոոն մի քիչ մտածեց ու ինքնագոհ ժոտալով Զավախյանին ասաց՝ «էդ քսան տոկոսն ինձ իսկականից հասնում

ա. ես էդ Նոբելյանիդ հաշվով ահագին պրոպագանդա եմ արել» եւ մի քիչ էլ մտածեց ու խորամանկ ժպտալով նախ ինձ նայեց, հետո նայեց Զավախյանին ու հարցրեց՝ «բա Արմե՞նն ինչով ա իրա էդ քսան տոկոսը վաստակել», եւ Զավախյանը Լիոյին ասաց՝ «մի քիչ առաջ բացատրեց», եւ Լիոն ասաց՝ «ի՞նչ բացատրեց», եւ ես ժպտալով Լիոյին ասացի՝ «ամենակարեւոր բաները մոռանում ես», եւ Զավախյանն ինձ ասաց՝ «ինքը ըտենց ա» եւ մի քիչ մտածեց ու Լիոյին ասաց՝ «Արմոյի էս վեպը որ հանկարծ անգլերեն թարգմանվի ու տպվի, ինձ մեկից մեկ էդ Նոբելյանը կտան», եւ Լիոն մի քիչ մտածեց ու զարմացած հարցրեց՝ «Արմենի վեպը որ անգլերեն թարգմանվի, քե՞զ ինչի պիտի Նոբելյան տան», եւ Զավախյանն ինքնագոհ ժպտալով ասաց՝ «որովհետեւ Արմոյի վեպի հալալ կեսն իմ Նոբելյան մրցանակի մասին ա», եւ Լիոն խորամանկ ժպտալով Զավախյանին ասաց՝ «բայց Արմենի վեպը որ անգլերեն տպվի, կարող ա Նոբելյան մրցանակն Արմենին տան», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ինքնագոհ ժպտալով ասաց՝ «վարիանտ չկա», եւ Լիոն զարմացած հարցրեց՝ «ինչի՞ վարիանտ չկա», եւ Զավախյանն ինքնագոհ ժպտալով ասաց՝ «անավարտ գործերին Նոբելյան մրցանակ չեն տալի», եւ Լիոն մի քիչ մտածեց ու ասաց՝ «կավարտի՝ կտան», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «դժվար էլ ավարտի» եւ մի քիչ էլ մտածեց ու մեղավոր ժպտալով ավելացրեց՝ «Արմոյի էս վեպը վայ թե անավարտ էլ մնա», եւ Լիոն զարմացած հարցրեց՝ «ո՞վ ա ասում», եւ Զավախյանն ինքնագոհ ժպտալով պատասխանեց ու ասաց՝ «հեղինակը», եւ Լիոն զարմացած ինձ հարցրեց՝ «էս ի՞նչ ա ասում», եւ ես ժպտալով ասացի՝ «ճիշտ ա ասում», եւ Լիոն ավելի զարմացած ինձ հարցրեց՝ «այսինքն, էս վեպդ վաբշե չես վերջացնելո՞ւ», եւ Զավախյանն իմ փոխարեն պատասխանեց ու ասաց՝ «չէ» եւ ժպտալով ավելացրեց՝ «ասեցինք՝ նետ», եւ Լիոն մի քիչ մտածեց ու Զավախյանին ասաց՝ «Արմենը որ մտքին դնի, պոեզիայի գծով էլ կարա Նոբելյան ստանա» եւ ինձ թաքուն աչքով անելով հարցրեց՝ «ճիշտ չեմ ասո՞ւմ», եւ ես ժպտալով Լիոյին ասացի՝ «հիմի էլ ինձ ե՞ս ձեռ առնում», եւ Զավախյանը Լիոյին ասաց՝ «պոեզիայի գծով Նոբել ստանալն ավելի դժվար գործ ա», եւ Լիոն հարցրեց՝ «ինչո՞վ ա դժվար», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «պոեզիան նախ պիտի անգլերեն կամ ամենաքիչը ֆրանսերեն թարգմանվի, առանձին գրքով տպվի, հետո նոր Նոբելի ներկայացվի», եւ ես ժպտալով Զավախյանին ասացի՝ «իմ ոտանավորները համ անգլերեն են տպվել, համ էլ՝ ֆրանսերեն», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «բայց առանձին գիրք էլ ա հարկավոր», եւ ես համաձայնվելով ասացի՝ «ճիշտ ես ասում», եւ Լիոն ժպտալով Զավախյանին ասաց՝ «ինձ թվում ա՝ արձակի գծով էլ ա անգլերեն թարգմանվելն ու գիրք տպելը պարտադիր», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «արձակը հնարավոր ա», եւ Լիոն ժպտալով հարցրեց՝ «պոեզիան հնարավոր չի՞», եւ Զավախյանը պատասխանեց ու ասաց՝ «չէ», եւ Լիոն ժպտալով հարցրեց՝ «ինչի՞ հնարավոր չի», եւ Զավախյանն ինքնագոհ ժպտալով ասաց՝ «որովհետեւ պոեզիան անթարգմանելի ա», եւ Լիոն զարմացած հարցրեց՝ «ո՞վ ա ասում», եւ Զավախյանը փոթկացնելով պատասխանեց ու ասաց՝ «հեղինակը», եւ Լիոն զարմացած նայեց ինձ ու հարցրեց՝ «էս ի՞նչ ա ասում», եւ ես ժպտալով Լիոյին ասացի՝ «ճիշտ ա ասում», եւ Զավախյանը հաղթական ժպտալով Լիոյին ասաց՝ «մանավանդ Արմոյի՛ պոեզիան ա անթարգմանելի», եւ Լիոն մի քիչ մտածեց ու ասաց՝ «բայց Արմենի բանաստեղծությունները շատ պարզ են», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ժպտալով ասաց՝ «պարզն ավելի դժվար ա թարգմանվում, քան՝ բարդը» եւ մի քիչ էլ մտածեց ու ինքնագոհ ժպտալով ավելացրեց՝ «էս արդեն ե՛ս եմ քեզ ասում», եւ Լիոն մի քիչ մտածեց ու Զավախյանին հարցրեց՝ «բա քո գրածները ո՞նց են թարգմանելու» եւ մի քիչ էլ մտածեց ու խորամանկ ժպտալով ավելացրեց՝ «դու էլ պակաս պարզ չես գրում», եւ Զավախյանը մի քիչ մտածեց ու ասաց՝ «իմն արձակ ա» եւ մի քիչ էլ մտածեց ու ավելացրեց՝ «արձակը հնարավոր ա» եւ մի քիչ էլ մտածեց ու ասաց՝ «իմ գրածնին որ ուրիշ լեզվով թարգմանում են, համարյա բնագրին հավասար ա ստացվում», եւ Լիոն մի քիչ մտածեց ու խորամանկ ժպտալով Զավախյանին հարցրեց՝ «ի՞նչ գիտես, որ հավասար ա ստացվում. գրածներդ քանի՞ անգամ են թարգմանվել», եւ Զավախյանն արհամարհական նայեց Լիոյին, մի քիչ մտածեց ու ասաց՝ «ինչքան որ թարգմանել են, ինձ լրիվ հերիք ա», եւ Լիոն մի քիչ մտածեց ու ժպտալով հարցրեց՝ «ինչերե՞ն են թարգմանել», եւ Զավախյանը պատասխանեց ու ասաց՝ «ռուսերեն» եւ մի քիչ մտածեց ու ավելացրեց՝ «Պազոլինիի թերթի մեջ որ պատմվածքս ռուսերեն թարգմանած տպել էին, շատ էլ լավ էր ստացվել», եւ Լիոն խորամանկ ժպտալով Զավախյանին հարցրեց՝ «ի՞նչ գիտես, որ լավ ա ստացվել. էդքան լավ ռուսերեն գիտե՞ս», եւ Զավախյանն արհամարհական նայեց Լիոյին ու ասաց՝ «ինչքան որ գիտեմ՝ ինձ լրիվ հերիք ա», եւ սրանով ու էսքանով ուզում եմ Լիոյի ու Զավախյանի էդ իրիկնային զրույցն ավարտել, որովհետեւ հենց հիմա զգացի, որ էդ զրույցն ու էդ խոսակցությունը որեւէ հեռանկար չի պարունակում՝ մանավանդ Նոբելյան մրցանակի առումով, եւ Զավախյանի ու Լիոյի իրիկնային էդ խոսակցությունն ավարտում եմ Զավախյանի էդ պատմվածքի ռուսերեն թարգմանության մասին խոսակցությամբ, որովհետեւ «Ազատամտություն» օրաթերթի ռուսերեն տարբերակում ռուսերեն թարգմանված ու տպագրված Զավախյանի էդ պատմվածքը բավական հետաքրքիր ու բովանդակալից կյանք ու ճակատագիր ունեցավ. ռուսերեն թարգմանված ու տպագրված Զավախյանի էդ առայժմ առաջին ու վերջին պատմվածքը Նոբելյան մրցանակի հանձնաժողովի աչքից վրիպեց, ճիշտ է, բայց փոխարենը՝ ադրբեջանցիների աչքից չվրիպեց, ավելի ճիշտ՝ ադրբեջանցիների ու վրացիների աչքից չվրիպեց, իսկ ավելի ստույգ՝ վրացիների ու ադրբեջանցիների կամքով ու կամեցողությամբ Զավախյանի էդ պատմվածքի ռուսերեն տարբերակը ռեգիոնալ մրցանակի արժանացավ՝ կովկասյան ժողովուրդների բարեկամության գծով, եւ դա էն բացառիկ դեպքերից էր, երբ մրցանակն իրավամբ արժանավորին ու արժանի ստեղծագործությանն է բաժին հասնում, եւ որպեսզի դուք էլ ես ասածիս հավատաք, պիտի մանրամասնելով ասեմ, որ Զավախյանի էդ պատմվածքն իսկապես ժողովուրդների բարեկամությանը եւ մասնավորապես հայերի ու ադրբեջանցիների բարեկամությանը ձոնված մի բացառիկ նմուշ է, եւ չնայած էդ պատմվածքն իրական դեպքի հիման վրա է գրված, եւ չնայած Զավախյանն էդ պատմությունը Չաղ Ֆելոյից է լսել, եւ չնայած էդ պատմությունը Չաղ Ֆելոյից ուրիշներն էլ են լսել, եւ չնայած ժամանակին ինքս էլ եմ էդ պատմությունը Չաղ Ֆելոյից լսել, այդուհանդերձ, մեջներիցս հենց Զավախյան Լեւոնն է գլխի ընկել ու հասկացել, որ էդ պատմությունը կարող է պատմվածքի նյութ դառնալ, ավելի ճիշտ՝ Զավախյանը, ի տարբերություն մյուսներիս, համարձակվել է Չաղ Ֆելոյի պատմած էդ պատմության հիման վրա պատմվածք գրել, որովհետեւ էսօրվա դրությամբ իսկապես մեծ ռիսկ ու մեծ համարձակություն է պահանջվում հայ ու ադրբեջանցի ժողովուրդների գոյություն ունեցած ու չունեցած երբեմնի բարեկամությունը հիշելու ու հիշեցնելու համար. ավելի ստույգ՝ Զավախյանն իր էդ հայերեն ու ռուսերեն պատմվածքում ոչ թե հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների բարեկամությունն էր մերկապարանոց հիշել ու շեփորահարել, այլ՝ մի ադրբեջանցու օրինակով համարձակվել էր նկարագրել ու ցույց տալ, որ ոմն ադրբեջանցի որոշ ու որոշակի մարդկային հատկություն է ունեցել ու հանդես բերել, ընդ որում՝ միանգամայն դրական մարդկային հատկություն, եւ որպեսզի ավելի լավ պատկերացնեք՝ ինչի մասին է խոսքը, հիմա կփորձեմ համառոտ վերապատմել Չաղ Ֆելոյի պատմած եւ Զավախյանի վերապատմած ու պատմվածքի վերածած էդ, ուրեմն, եղելությունը, որի հիմնական բովանդակությունը հետեւյալն է. ութսունականների վերջերին՝ Սումգայիթի ու Բաքվի վայրագություններից հետո, երբ հայերը միանգամայն քաղաքակիրթ կերպով հայոց Մասիսի գյուղերից դուրս էին հրավիրում մասիսաբնակ ադրբեջանցիներին, դուրս հրավիրվող ադրբեջանցին դուրս հրավիրող հային մոտենալով՝ վերջինիս է մեկնում երեք հատ սովետական կարմիր տասանոց, եւ դուրս հրավիրողը կարծելով թե՝ դուրս հրավիրվողն իրեն փրկագին ու կաշառք է առաջարկում, կոպտորեն հարվածում է դուրս հրավիրվողի վզակոթին, եւ երբ պարզվում է, որ էդ դուրս հրավիրվողն էդ երեսուն ռուբլին Արտաշ անունով իր համագյուղացուն է պարք եւ իրեն դուրս հրավիրողի միջոցով ուզում է իր էդ պարտքը վերադարձնել, ադրբեջանցու էդ երեք տասանոցները, բնականաբար, անխոս ընդունվում են, եւ, ըստ ամենայնի, հետագայում հանձնվում են Արտաշ անունով էդ հայ պարտատիրոջը. այսինքն, ենթադրվում է, որ դուրս հրավիրող հայը դուրս հրավիրվող ադրբեջանցու էդ երեք հատ սովետական կարմիր տասանոցներն ընդունելով՝ հետագայում հասցրել ու հանձնել է պարտատիրոջը՝ Արտաշին, եւ սա անձամբ իմ ենթադրությունն է, որովհետեւ Չաղ Ֆելոն ընդամենը ականատեսի պատմածն էր մեզ վերապատմում, եւ ոչ մի խոսք չկար էն մասին՝ արդյոք ադրբեջանցու փոխանցած էդ տասանոցներն Արտաշ անունով պարտատիրոջը հասնո՞ւմ են, թե՝ չէ, եւ ընդհանրապես՝ ականատեսից լսված ու Չաղ Ֆելոյի միջոցով աջուձախ սրան ու նրան վերապատմված էդ պատմության մեջ որոշակին էդ հայ պարտատիրոջ Արտաշ անունն էր, մեկ էլ՝ սովետական էդ կարմիր տասանոցների քանակությունը՝ երեք, եւ Չաղ Ֆելոյի վերապատմության մեջ Մասիսի շրջանի էդ գյուղի անունը նույնիսկ չէր նշվում, մինչդեռ Չաղ Ֆելոյի վերապատմության հիման վրա գրված Զավախյանի մրցանակակիր ու երկլեզվյան էդ պատմվածքում ե՛ւ գյուղն անուն ունի, ե՛ւ դուրս հրավիրողն ու դուրս հրավիրվողը, եւ, բնականաբար, պարտատերն էլ կա. այսինքն, ինչպես միշտ, Զավախյանն ես անգամ էլ ուրիշից լսած պատմությունն իբրեւ ականատես է պատմում՝ չզլանալով իր բոլոր գործող անձանց անուններ շնորհել, եւ, ինչպես միշտ, Զավախյանի ես գրության մեջ էլ միայն էն մարդու անունը չկա՝ ումից որ ինքն էդ պատմությունը լսել է. այսինքն, Զավախյանի ես պատմվածքում բոլոր գործող անձինք իրենց անուններով կան՝ բացի լուսահոգի Չաղ Ֆելոյից, եւ որ ասում եմ՝ բոլոր գործող անձինք իրենց անուններով կան, առաջին հերթին նկատի ունեմ էդ մասիսաբնակ ադրբեջանցուն, որի անունը Զավախյանի էդ պատմվածքում

Հասան է, մինչդեռ Չաղ Ֆելոյի վերապատմության մեջ դույն ադրբեջանցին անուն չուներ, ավելի ճիշտ՝ Չաղ Ֆելոն իր վերապատմության մեջ էդ ադրբեջանցու անունը չէր նշում՝ էն պարզ պատճառով, որ էդ պատմության իրական ականատեսն էդ իրական դեպքը Չաղին պատմելիս որեւէ կոնկրետ անուն չէր նշել՝ բացառությամբ մասիսցի էդ հայ պարտատեր Արտաշի, ում որ դույն ադրբեջանցին սովետական երեսուն ռուբլի էր պարտք եւ իրեն գյուղից դուրս հրավիրողին թախանձագին խնդրում էր, որպեսզի վերջինս սովետական էդ երեք կարմիր տասանոցներն իր համագյուղացի էդ, ուրեմն, Արտաշին փոխանցի, եւ, Չաղ Ֆելոյի պատմածից էդպես էլ չիմացանք՝ ի վերջո էդ երեք կարմիր տասանոցներն իրենց իրական տիրոջը հասնո՞ւմ են, թե՝ ոչ, եւ չնայած ես հարցի պատասխանը չափազանց կարեւոր ու չափազանց էական է, այդուհանդերձ, մենք Չաղի պատմածից ու Զավախյանի գրածից էդ կարեւորագույն հարցի պատասխանն էդպես էլ չստացանք, բայց հավաստի գիտենք, որ հայն ադրբեջանցու թախանձագին խնդրանքին անսալով՝ այնուամենայնիվ, ընդունում է սովետական էդ կարմիր տասանոցները, որոնք Չաղ Ֆելոյի պատմության մեջ ընդամենը երեք հատ էին, իսկ Զավախյանի պատմվածքում՝ ուղիղ հիսուն հատ, որովհետեւ Զավախյանի պատմվածքում էդ ադրբեջանցի Հասանը ոչ թե երեսուն ռուբլի, այլ մի ամբողջ կով է պարտք լինում իր համագյուղացի հային, որի անունը Զավախյանի պատմվածքում ոչ թե Արտաշ է, այլ՝ Աշոտ, ու էդ Աշոտն էլ, ըստ Զավախյանի պատմվածքի, ոչ թե մասիսցի ինչ-որ հայ է, այլ ոչ ավել ոչ պակաս՝ Զավախյանի հարազատ պապը, եւ շատ հնարավոր է՝ շարքային ու միամիտ ընթերցողը հավատա Զավախյանի գրածին, որովհետեւ շարքային ու միամիտ ընթերցողը, ի տարբերություն ձեր խոնարհ ծառայի, ինչքան որ Զավախյանի գրական ու գեղարվեստական տրյուկներից է անտեղյակ, նույնքան էլ էդ պատմության Չաղ Ֆելոյի տարբերակին է անծանոթ, եւ ես ամենից էլ բացի, շարքային ու անտեղյակ ընթերցողը հեշտուհանգիստ կարող է հավատալ էդ պատմության ջավախյանական վերսիային, որովհետեւ Զավախյանի պատմվածքում դեպքերն ու իրադարձությունները ոչ թե Մասիսի շրջանի ինչ-որ անանուն գյուղում են տեղի ունենում ու զարգանում, այլ Ալավերդու կողմերը, ավելի ստույգ՝ Թուրքի Այրումում:

Շարունակությունը՝ հաջորդ շաբաթ

Առաջին հարկում գտնվող նկուղը «նախկինում բացվածք է»

«Իմ բնակարանի տակ չի մտել որեւէ մեկը գեթ մի որոմ»

Ապջափնյակ թաղային համայնքի ավագանու 2009 թ. ապրիլի 2-ի թիվ 38 որոշմամբ՝ համայնքի սեփականություն հանդիսացող Շինարարների փողոցի հ. 2 շինությունն աճուրդային կարգով օտարվեց:

51,0 քմ վիճարկվող տարածքը (1978թ.-ի շենք է- Ռ. Մ.) աճուրդային գնով՝ 689 700 դրամով «շահել» էր Շինարարների փողոցի հ. 5 շենքի 13 բնակարանի բնակիչ Լիոարիտ Շահինյանը: Որոշումը, որը հետագայում վիճարկվեց դատարանում նշյալ հասցեի բնակիչների կողմից, մի քանի «վրիպակներ» ուներ. լուսանկարում պատկերված «վրիպակներից» մեկն այն էր, որ համայնքապետ Ռուբեն Հովսեփյանի ստորագրությունը բացակայում էր, այն կնքված էր աշխատակազմի քարտուղարի կնիքով, այն էլ՝ անհասկանալի կնիքով, տարբեր էր որոշման տառատեսակը: Ավագանու անդամներից մեկն էլ աճուրդում հաղթածի եղբայրն էր՝ Համբարձում Շահինյանը:



Նշյալ բազմաբնակարան կոոպերատիվ շենքի բնակիչները ուշացումով տեղեկացան, որ իրենց շենքի նկուղը տրվել է Համբարձում Շահինյանին՝ արվեստանոցի նպատակով:

Շենքի 46 բնակիչ դիմեց ՀՀ վարչական դատարան, պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումով: Բնակիչները տեղեկացրին, որ «Պետպլան-2» համատիրությունը, այսինքն՝ նշյալ շենքը գրանցվել է պետռեգիստրում դեռեւս 2005թ.-ին:

2006թ.-ին ՀՀ կառավարությունն ընդունեց բազմաբնակարան շենքերի կառավարման մասին օրենքի հիման վրա պետական եւ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա կառուցված բազմաբնակարան շենքի պահպանման եւ սպասարկման համար անհրաժեշտ հողամասը տվյալ շենքի բնակարանների եւ ոչ բնակելի տարածքների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով անհատույց փոխանցման մասին 1855-Ն որոշումը: Եվ ինչպես օրենսդիրն էր նախատեսել, բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին էին պատկանում շենքի միջհարկային ծածկերը, առաստաղները, հատակները, նկուղը, ճեղնահարկը, տեխնիկական հարկերը, տանիքը, մուտքերը, աստիճանավանդակները... Հետեւաբար, նշված նկուղային տարածքը չէր կարող ավագանու որոշմամբ աճուրդի դրվել կամ օտարվել, քանի որ այն համատիրության անդամների ընդհանուր բաժնային սեփականությունն էր:

Բնակիչները խնդրում էին դատարանից՝ անվավեր ճանաչել «հաղթողի» սեփականության իրավունքի գրանցումը, առուվաճառքի պայմանագիրը: Ի դեմ, աճուրդի մասին հայտարարությունը տպագրվել էր «Հայաստանի Հանրապետություն» թերթում՝ 2009թ. ապրիլի 4-ին, իսկ օրենքով սահմանված մեկ ամիսը շանցած՝ 16 օր հետո առուվաճառքի պայմանագիր էր կնքվել Շահինյանի հետ:

Շենքի բնակիչներից ուսուցչուհի Գրետա Ավետիսյանը «Առավոտի» շենք այցելելու ժամանակ տեղեկացրեց, որ դեռ 70-ականներին կոոպերատիվի նախագահը նկուղային հարկը նախատեսել էր հարսանյաց սրահի համար: Նշված սրահի բարձրությունը ցածր էր, այն ձայնամեկուսացված չէր, հետեւաբար՝ ցանկացած աղմուկ լսելի էր վերեւի 15 հարկերում ապրող բնակիչներին:

Նկուղային հարկը մինչ օրս ծառայում է շենքի կոյուղու, սանհանգույցների, խմելու ջրի խողովակների պահպանման տարածք. «Ավելի վրդովեցուցիչ է, երբ ինձ ասացին, թե իբր իմ բնակարանի տակն արդեն 2 տարի է, ինչ օգտագործվում է որոմես արվեստանոց, նման բան չի եղել. որեւէ մեկը չի մտել իմ բնակարանի տակ՝ գեթ մի որոմ»,- ասում է Գրետա Ավետիսյանը:

Բարեբախտաբար, զինամթերքի պահեստ չի ծառայել ինչ-որ մեկի կողմից:

Շենքի բնակիչները նաեւ տեղեկացրին, որ համատիրության կառավարման բարձրագույն մարմինը ընդհանուր ժողովն է, որը տեղի չի ունեցել եւ հետեւաբար՝ բնակիչների կողմից չի տրվել համաձայնություն կոոպերատիվ շենքում որեւէ փոփոխություն անելու համար: Այսինքն՝ այլ շենքի փայատերին մեկ այլ շենքի ընդհանուր բաժնային սեփականության մի մասի սեփականատեր ճանաչելու նպատակով:

Ի դեմ, 4 պատասխանողներից 2-ը՝ տարածքային կադաստրը, Երեւանի քաղաքապետարանն իրենց առարկություններում նշել էին, թե. «Հայցադիմումում վիճելի տարածքը անընդմեջ նշվում է որպես նկուղ, սակայն ոչ մի հիմնավորում կամ քաղաքաշինական նորմ չի նշվում նկուղ հասկացողության վերաբերյալ»:

Հայաստանի բազմաբնակարան շենքերի տակ գտնվող տարածքները, որտեղ խողովակներ են, մկներ, բնակչի իրեր, որտեղով կոյուղու «ջրերն են անցնում», նկուղ են անվանում: Համենայնդեպս, դա մինչ օրս պատկերասրահ կամ թանգարան չեն անվանել: «Այստեղ ակամա հիշվում է ժողովրդական ասացվածքը. անընդհատ շաքար ասելով՝ բերանը չի քաղցրանա: Հայցվորներին թվում է, թե ինչքան շատ ասեն նկուղ է, ոչ բնակելի, շենքի տեխնիկական տարածք, այնքան դատարանը կհամոզվի, թե շենքի առաջին հարկում գտնվող նախկինում բացվածքը, իսկ հետագայում քարով շարված ոչ բնակելի տարածքը կդառնա նկուղ»,- հակադարձել էր պատասխանող կողմը:

Վարչական դատարանը այս տարվա փետրվարի 2-ին, դատավոր Ա. Դարբինյանի նախագահությամբ, մերժեց բնակիչների հայցադիմումը:

Բնակիչները շարունակելու են բողոքել:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

Մահվան մեջ կյանք փնտրողները

Արցախյան պատերազմը նոր էջ բացեց հայ ժողովրդի պատմության մեջ: Լավագույններն իրենցից կրկնակի զինված եւ կրկնակի թվով ազերի զինվորների դեմ կռվեցին արիաբար՝ «Զոհվելն արգելվում է» նշանաբանով, քանզի թիկունքից ուղարկած սիրելի մայրերի ու քույրերի գործած տաք գուլպաներն էին նրանց ոտքերն ու սիրտը ջերմացնում, սփյուռքից եկած տղաների խրոխտ ոգին: Հիմա մեր հիշողության ծալքերից վեր են հառնում հայ կանանց կերպարներ, որոնց անունները գրվեցին պատմության էջերում: Հայ նվիրյալ կանանցից է հրապարակագիր Սիլվա Սուքիասյանը, ով առաջիններից մեկն էր, որ մեկնեց Արցախ:

- Ի՞նչ է հայրենասիրությունը Ձեզ համար:

- Հայրենասիրությունը ոչ թե քնարական թեմա է, այլ՝ ապրում, երթյուն, ընդհանրապես ուժ, հոգի: Ես սնվել եմ համաշխարհային գրականությամբ եւ հայ դասական պոեզիայով: Ինձ համար ուղենիշներ են եղել Ռաֆայել Պատկանյանի, Պեշիկթաշլյանի հայրենասիրական բանաստեղծությունները: 1988թ.-ին աշխատում էի Երեւանի հակակարկտային ռազմականացված ծառայությունում, միաժամանակ հայկական հեռուստատեսության ուսումնական ծրագրերում՝ Ռոբերտ Մավիսակալյանի «Սփյուռք» եւ «Հուշարձաններ» հաղորդաշարերում: Երբ սկսվեց Ղարաբաղյան շարժումը, Նախիջեւանի սահմաններում թեժ մարտեր էին, ադրբեջանցիները ոմբակոծում էին Հայաստանի սահմանները, այդ դժվարին ժամանակ ինձ հաջողվեց աշխատավայրից ձեռք բերել գաղտնի քարտեզներ, որոնցում ճշգրիտ նշված էին Նախիջեւանի կարեւոր օբյեկտները, ռազմական պահեստները, բանակային ստորաբաժանումները եւ այլ կարեւոր փաստեր: Քարտեզները հանձնեցի բանաստեղծ Ռոմիկ Սարդարյանին, նա էլ հասցրեց Վազգեն Սարգսյանին:

- Ե՞րբ մեկնեցիք առաջին անգամ Ղարաբաղ եւ ի՞նչ տպավորություններ ունեցաք:

- Շուշիի գրավումից անմիջապես հետո՝ 1992 թվականի մայիսի 10-ին, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ սրբազանի եւ Գուրգեն Մելիքյանի հետ մեկնեցինք Արցախ: Մեր առաջին մոմերն ու աղոթքն առ Աստված Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ ավերված եկեղեցուն կենդանություն ու շունչ տվեցին: Ամենուր եւ հատկապես Վանք գյուղում հանդիպեցինք ազատամարտիկների, նաեւ՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Սամվել Շահինյանին, ում հարցրեցի, թե մեր այցելությունն օգնո՞ւմ է իրենց, թե՝ ոչ: Նա պատասխանեց, որ այցելուները խանգարում են, քանի որ միայն այս հողի վրա ապրողը գիտի, թե ինչպես պետք է պայքարել: Դա խորիմաստ դաս էր, քանի որ այսօր, երբ սփյուռքից մեզ թելադրում են, թե ինչպես կամ ինչ պետք է անել, սակայն հայրենիքում ապրողը միայն գիտի տառապանքի իրական գինը: Տասն օր մնացինք Արցախում եւ ամեն օր լինում էինք տարբեր վայրերում: Մի ընտանիքում գիշերեցինք, որտեղ մեկուկես տարեկան փոքրիկ կար եւ շարունակ լաց էր լինում, երբ հարցրեցինք՝ ինչո՞ւ է լաց լինում, մայրն ասաց՝ թեյ է ցանկանում: Իսկ թեյ չկար: Այո, այդպես դժվար էին դիմակայում արցախցիները, որի ականատեսն էինք:

Սիլվա Սուքիասյանը զինվորների հետ:

- Էլ ի՞նչ հանդիպումներ ունեցաք Արցախում:

- Հետաքրքիր էր հանդիպումը ԼՂՀ-ի վարչապետ Օլեգ Եսայանի հետ: Զրույցի ընթացքում նա ասաց, որ առաջիններից եք, որ եկաք Արցախ:

Այդ տարիներին կապի միջոցներ չկային, գնում էինք Ղարաբաղ, բերում լուրերը Երեւան ու հաղորդումներ տալիս: Երբ Արցախից վերադարձանք, Հայաստանում ընդամենը երկու ժամով լույս կար, ստիպված հարմարեցրինք, տարբեր ծրագրերով ներկայացրինք բերված նյութերը, որ Ղարաբաղի մասին բոլոր մարզերում էլ տեղեկանային: Առաջին հայ լրագրողը, որը եղել է Արցախում, լուսահոգի Ռոբերտ Մավիսակալյանն էր, ով ուղղաթիռով կարողացավ մտնել Ղարաբաղ եւ հաջորդ օրն իսկ լրատվություն տալ: Քանիցս խնդրել էի նրան, որ ինձ էլ տանի, սակայն մերժում էր, ասելով՝ չգիտեմ, ողջ կվերադառնամ, թե՝ ոչ:

- 1992 թվականից հետո եղե՞լ եք Արցախում:

- 1996 թվականին Արցախ մեկնեցի Անգլիայի Լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոքսի հետ: Հայոց բառարանում չեմ գտնում այն համապատասխան բառը, որ կարող է լիարժեք բնորոշել այս սրտացավ տիկնոջ քրիստոնեական նվիրումը հայ ժողովրդի հանդեպ: Նա՝ թողնելով շքեղ պալատները, գալիս էր Արցախ՝ ամենադժվարին պայմաններում օգնություն ցուցաբերում հայ ժողովրդին: Իմ երախտագիտությունն եմ հայտնում Ք. Քոքսին, որ Գանձասարի սուրբ հարկի տակ ծունկի իջած աղոթում էր հայ ազատամարտիկների կյանքի անվտանգության համար: Քերոլայն Քոքսի հետ գնացինք կույր ազատամարտիկների մոտ, 7 տարեկան մի տղա կորցրել էր տեսողությունն արկի պայթյունից: Փաստորեն, պատերազմը թողնում է ծանր հետեւանքներ, որը չի ավարտվում: Բարոնուհին ամեն անգամ մարդասիրական օգնություն էր բերում Արցախ եւ փորձում սփոփել արցախցիների վիշտը: 1995 թվականին նրա ջանքերով Արցախում վերականգնողական կենտրոն ստեղծվեց:

- Որո՞նք են պատերազմի դասերը:

- Տարիներն, անկասկած, շատ բան մոռացության են մատնել, հենց այդ հանգամանքը պարտադրում է ինձ շաղավիղել լոկ հուշերի պատառիկներին: Թերեւս գտնվեն մարդիկ, որ համեստության դեմ կատարված մեղանչում նկատեն, մտածեն, թե ինձ եմ գովում, սակայն լռել չեմ կարող, որովհետեւ հայրենասիրությունը հայ կին լրագրողի արյան բաղկացուցիչներից է, եւ նա օտարազգի կին լրագրողին չի զիջել, ինչպես ներկայացվում է այսօր: Հիրավի, Արցախյան ազատագրական պատերազմը հաղթեցինք ազգովի՝ լինի մարտադաշտում, թե թիկունքում, քանզի յուրաքանչյուրն՝ այր թե կին, ծեր թե մանուկ, իր կարելիության չափով ներդրում ունեցավ այս ամենադժվարին, բայց ճշմարիտ պայքարում: Խոնարհվում ենք բոլոր զոհվածների առաջ, քանզի նրանց արյան գնով այսօր խաղաղ ու ստեղծագործ են մեր առավոտները:

Հարցազրույցը՝
ՕՎՍԱՆՆԱ ՄԱԴԱԹՅԱՆԻ

Ա a r a v o t d a i l y
ՇԱԲԱԹ 25.02.2012

«Երկնագույն հերոսներ» պետք են, պրոֆեսիոնալիզմ՝ նույնպես

Թատերարվեստում եւ կինոարվեստում կա «երկնագույն հերոս» արտահայտությունը, որի «ծնունդը» պայմանավորում են հմայիչ արտաքինով դերասանները: Ի դեպ, այն ամենեւին կապ չունի ոչ ավանդական սեռական կողմնորոշման հետ: «Երկնագույն հերոսների» օրինակները բազմաթիվ են՝ Ժան Մարե, Ժերար Ֆիլիպ, Ալեն Դելոն, Լեոնարդո դի Կապրիո, Գենադի Բորտնիկով, Սերգեյ Բոնդարչուկ, Օլեգ Ստրիժենով եւ այլն: Ժամանակին հայ թատրոնում նման դերերի համար ընտրվել են Իսահակ Ալիխանյանը, Վաղարշ Վաղարշյանը, Գեղամ Հարությունյանը:

«Առավոտը» ճանաչված բեմադրիչներից հետաքրքրվեց՝ այսօր որքանո՞վ է արդիական «երկնագույն հերոսը»:

Ռուբեն Բաբայանի կարծիքով, ինչպես գեղեցիկ կինը, այնպես էլ գեղեցիկ տղամարդը գեղագիտական հաճույք է պատճառում, օրինակ, Միքելանջելոյի «Դավիթը», Ռոդենի «Մտածողը», «Մերկ Բալզակը», Դալիի գործերը. «Գեղեցիկը մշտապես արվեստի մեկնաբանության նյութ է, գեղեցիկ մարմինը գեղեցիկ է՝ անկախ սեռից: Սխալ է, երբ սահմանափակում է դրվում: Եթե տղամարդը չի զգում կամ ընդունում տղամարդու գեղեցկությունը, ապա նման ընկալումը թերի է...»:

Միքելանջելոյի Դավիթը խորհրդանշում է առնացի գեղեցկությունը:

Արմեն Էլբակյանն, օրինակ, չի ընդունում «երկնագույն հերոսների» տեսակը. «Լավ բան չէ, երբ ռեժիսորն օգտագործում է ընդամենը դերասանի սիրունությունը: Կարեւոր է շարժառիթը, թե ինչի համար ես բեմ բարձրացնում նրան: Հերոսը պետք է «խարակտեր» ունենա: Ալեն Դելոնը իմ իմացած դերասաններից գուցե ամենագեղեցիկն է, բայց այդ գեղեցիկ տղամարդը ունեցել է բազմաթիվ «փուչ» դերեր: Հոլիվուդյան կինոաստղ Բազիլ Ռոբտոնը ներկայացել է Ռոմեոյի, Ռիչարդ Երրորդի կերպարներով: Այդ դերասանը գեղեցիկ տղամարդ չէր, բայց ինձ համար նա գեղեցիկ Ռոմեոներից մեկն է: Կարճ ասած՝ կարեւորում եմ պրոֆեսիոնալիզմը»:

Ժիրայր Դադասյանի փոխանցմամբ՝ թեեւ Միեր Մկրտչյանը չուներ Ռոմեոյին հատուկ գեղեցիկ արտաքին, բայց ժամանակին կանանց 90%-ը սիրահարված էր նրան. «Երկնագույն հերոս» արտահայտությունը արեւմտյան մոտեցում է, այնպես, ինչպես հոլիվուդյան ժոիտը: Ժամանակին ռեժիսորներն ընտրում էին ու էկրան բարձրացնում գեղեցիկ դերասաններին: Դա բերեց նրան, որ մարդիկ ցանկացան նմանվել նրանց, անգամ տղամարդիկ դիմում էին կոսմետիկ վիրահատությունների... Ժան Գաբենն էլ չէր ընդունում Ալեն Դելոնին, ասելով, թե նա դատարկ, սիրուն տղա է, բայց «Երկուսը քաղաքում» ֆիլմից հետո Գաբենը փոխեց իր կարծիքը»:

Վահե Շահվերդյանի խոսքը հակիրճ էր. «Ամենատգեղ տղամարդը, եթե համոզիչ է խաղը, կարող է Ռոմեո լինել»:

Նիկոլայ Ծատուրյանը նախ կատակեց, թե երկնագույնը պահանջված է եղել բոլոր ժամանակներում, այդ թվում՝ նաեւ այսօր, հետո ավելի լուրջ ասաց. «Ռոմանտիզմը մեզանում շատ է պակասել: Գուցե «երկնագույն հերոսներ» անհրաժեշտ են, որ այդ պակասը լրացվի...»:

Ալեքսանդր Գրիգորյանը դեմ է «երկնագույն հերոս» արտահայտությանը. «Ես երկնագույն բառը կփոխարինեի ռոմանտիկով: Ռոմանտիկ հերոսներն ունեն մտքի թռիչք, հարուստ երեւակայություն, երազելու բացառիկ կարողություն... Այնպես որ, ռոմանտիկ հերոսները մեզ շատ պետք են: Մեր թատրոնի ռոմանտիկ հերոսն, օրինակ, տաղանդավոր դերասան Երվանդ Ենգիբարյանն է»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

«Ռուբոյի ասածները լուրջ չեմ ընդունում»

Բնապահպանական բանավեճից մինչեւ ստիպողական «հանրաքվեականացում»

Երեկ «Հայելի» ակումբում ԱԺ ՀՀԿ-ական պատգամավոր Մանվել Բաղեյանը խոսելով Մաշտոցի այգու խնդրի եւ բնապահպան-ակտիվիստների ակցիաների մասին՝ ասաց, որ շարժումը հիմնականում ուղղորդվում է «դրսից» եւ նպատակ ունի աղակայունացնել իրավիճակը Հայաստանում: Դա էլ բավարար չէ, նրանց մեջ, պատգամավորի ասելով, սատանիստ կա: Մանվել Բաղեյանի ձեւակերպմամբ, ինքը նախկինում տեղեկացված չէր խնդրին, դրա համար կարծիք չէր հայտնում, իսկ հիմա խորաթափանց է եղել ու հասկացել է ամեն ինչ. «Բողոքի այդ ակցիաները մի քանի շերտ ունեն, առաջինը, որ դրանք կազմակերպված եւ ուղղորդված են՝ հեռու գնացող քաղաքական նպատակներով, ընդ որում՝ կազմակերպված ոչ միայն հայաստանյան ուժերի կողմից, այլեւ ուղղորդված արտասահմանից... Մասնակիցների երկրորդ հատվածը իրոք բնապահպանական խնդիրներով մտահոգված ազնիվ մարդիկ են: Այս «կարկանդակը» երրորդ շերտ էլ ունի, ու երրորդ հատվածում այն մարդիկ են, որոնց ես անվանում եմ մարտնչող տգիտություն: Մեջներն իհարկե ազնիվ մարդիկ էլ կան, բայց հիմնական զանգվածը նրա՛նք չեն կազմում: Կազմակերպիչները քողարկված են, բայց կան նաեւ կամավոր հանդես եկող մարտնչող տգետներ, որոնք իրե՛նցն են ուզում դնել, իրենց մշակույթն են ուզում սահմանել Հայաստանի Հանրապետությունում: Դա նույն երեւույթն է, ինչ-որ ռաբիսի կլկլոցը, որ պիտի ամենուրեք հնչի, ամենուրեք ամեն ինչ պիտի քանդվի ու չսարքվի»:

Մանվել Բաղեյանը հայտարարեց, որ պատրաստ է մանդատը վայր դնել, եթե Մաշտոցի այգու կրթակները 2 տարի անց՝ «Հին Երեւան» նախագծի իրականացումից հետո շարունակեն գոյություն ունենալ:

Ճանաչված երգիչ-երգահան Ռուբեն Հախվերդյանը, որը միշտ հանդես է եկել Թեղուտի ակտիվիստների շարժման օգտին, հայտարարեց, թե Մաշտոցի պուրակի հետ կապված բողոքի ակցիաները ոչ մի կապ չունեն բնապահպանության հետ: «Ես էլ եմ դրա մեջ ինչ-ինչ շերտեր տեսնում: Եթե պայքարում են՝ թող պայքարեն անճաշակ նարեկիզմի դեմ, որ գծվել է հրապարակի հետեւում, ուր քայլելու տեղ չկա, շենքը գծվել է շենքի վրա, մեկի տակից էլ ջուր է հոսում՝ «պրորաբն» ասաց... էդքան ահռելի

տարածք են խլել, որտեղ ոչ մի ծաղիկ բուրմունք չի ունենա»,- ասաց արվեստագետը՝ երգելով հայտնի երգը: Նա նշեց, որ հավատում է Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին ու վստահ է, որ 2 տարի հետո «Հին Երեւան» նախագծի կյանքի կոչվելուն պես կրթակաշարը Մաշտոցի այգուց կվերանա. «Քանի որ մինչեւ հիմա մենք կառավարությունից քիչ նորմալ բաներ ենք տեսել, հավատ չկա, մարդիկ կասկածում են, որ կարող ա բերեն էդտեղ էյֆելյան աշտարակ կառուցեն: Իսկ Տարոնին վստահում եմ, ինքը իրա հոր տղեն ա, համ էլ աչքի առաջ ունենք իր թաղամասը՝ Ավանը»:

Ռուբեն Հախվերդյանը ընդհանրապես դեմ է բարձրահարկ շենքերին. «Հինգ հարկից ավելի բարձր շենքեր չէի ուզենա տեսնել: Երեւանը 500 000-անոց քաղաք պտի լիներ՝ Փարիզի նման, իր արվարձաններով, էդպես է նախագծել Թամանյանը, իսկ ես նարեկիզմը այլանդակություն է... Ցավոք, իշխանությունների շնորհիվ կորավ քաղաքային կուլտուրան եւ ինտելիգենտ մասը գնաց էստեղից, ու մեր հույսը հիմա երիտասարդներն են: Բայց իրենք էլ պիտի գլոբալ մոտենան հարցերին, իշխանություններն էլ պիտի հրաժարական տան, ասեն՝ չեն կարող»:

Ասուլիսի ժամանակ դժգոհելով իշխանություններից՝ երգահանը փաստեց, որ իր բժիշկ խնամուն Երեւանի բժշկական պետական համալսարանի ռեկտոր Դերենիկ Դումանյանի հրահանգով օրերս ստիպել են ՀՀԿ անդամ դառնալ՝ սպառնալով հակառակ պարագայում ազատել աշխատանքից: Երբ ՀՀԿ-ական պատգամավոր Մանվել Բաղեյանը չհավատաց դրան, Ռուբեն Հախվերդյանը բարձրախոսը միացրած բջջայինից զանգեց իր բժիշկ բարեկամ Արամ Ռոբերտիչի կնոջը եւ լրագրողները լսեցին, թե ինչպես է նրա տիկինը հաստատում, որ իր ամուսնուն համոզել է ՀՀԿ-ական դառնալ ճանաչված պլաստիկ վիրաբույժ եւ բժշկական համալսարանի ռեկտորի խորհրդական Արտավազդ Սահակյանը: Ռուբեն Հախվերդյանը հավելեց, որ վերջինս իր սանիկն է: «Պետք է օբյեկտիվ լինել,- Մանվել Բաղեյանին նախատեց արվեստագետը,- ամեն ինչ էդպես է, չհաշված այն, որ ամբողջ հանրապետությանը դրել եք ֆալշիվի արաղների վրա, բայց դա չի խանգարում մեր պարզ ուղեղով դատենք, որ ձուկը հենց գլխից է հոտում»:

Aravot.am-ը կապվեց նաեւ Արտավազդ Սահակյանի հետ: Նա ասաց, որ ինքը Ռուբեն Հախվերդյանի սանիկը չէ, այլ սանիկի հայրը: Իսկ ինչ վերաբերում է ասուլիսում իր մասին հնչած հայտարարությանը, ապա վիրաբույժի խոսքով. «Ռուբոյի ասածը ես երբեք էլ, վերջերս նույնպես՝ լուրջ չեմ ընդունում, երկրորդ՝ այն անհիմն է: Ես ռեկտորի խորհրդականն եմ, անկուսակցական եմ, եւ եթե Դումանյանն իսկապես ստիպեր ՀՀԿ անդամ դառնալ, առաջինը երեւի ինձ կստիպեր»:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան. երկրի մշակույթը իր ԴՆԹ-ն է

Երեկ Հայաստանում Ֆրանսիական համալսարանում կայացավ համաժողով՝ «Արդյոք կարելի՞ է խոսել եվրոպական մշակույթից» խորագրով, որին ներկա էր նաեւ Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար Տրայան Հրիսթեան: «Մշակույթը ավելի լայն է, քան միայն տվյալ երկրի ադաթները,- ասաց համաժողովի հիմնական բանախոսներից մեկը՝ Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Անրի Ռենոն,- երկրի մշակույթն իր վարվելակերպն է, իր ԴՆԹ-ն: Մինչ այսօր երկրների վարվելակերպի մեջ մեծ տարբերություններ կան, ինչպես Ֆրանսիայի եւ Գերմանիայի մոտեցումը մի շարք հարցերի: Օրինակ՝ Ֆրանսիայի կառավարությունն իր պարտքն է համարում աջակցել Կենտրոնական բանկի գործունեությանը, իսկ գերմանացիների համար Կենտրոնական բանկի ինքնուրույնությունը անխախտելի է: Այս դեպքում կարեւոր է փոխհամաձայնության գալ: Եվրոպայի ձեռքբերումներից է ընդհանուր արժույթը՝ եվրոն: Թեեւ կան ասպարեզներ, որտեղ դեռ մեծ աշխատանք պիտի տարվի, օրինակ՝ Եվրոպայի ընդհանուր արտաքին քաղաքականության մշակումը»: Խոսելով եվրոպական մշակույթի մասին՝ պարոն Ռենոն հիշեց այն ժամանակները, երբ Եվրոպային անվանում էին «առանց հոգու Եվրոպա» կամ «վաճառականների Եվրոպա»: «Այն ժամանակ մեծ դեր խաղաց Ժան Մոնրեի որդեգրած քաղաքականությունը, որի նպատակն էր ոչ թե ապրանքների փոխանակումը, այլ մարդկանց մերձեցումը»:

Համաժողովին ներկա ՀՀ մշակույթի փոխնախարար Արեւ Սամուելյանն ասաց, որ Հայաստանը ակտիվորեն մասնակցում է Եվրոպական մշակութային ծրագրերի, ինչպիսին են «Պահպանենք մեր մշակութային քաղաքները» եւ «Գրական տաղան» նախաձեռնությունները: Նա փաստեց, որ ստեղծվել է «Ոսկե ծիրան» տարածաշրջանային կինոդպրոցը, որտեղ եվրոպական կինոարվեստի մի շարք գործիչներ անցկացրել են վարպետաց դասեր: Այս տարի արդեն ութերորդ անգամ կանցկացվի «Թանգարանային գիշեր» ակցիան:

ՍՏԵԼԼԱ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Իջեւանի քաղաքաթետարանում միմյանց անոթատվել են

Քաղաքաթետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Աստղիկ Եգանյանի ու նորընտիր քաղաքաթետ Վարդան Ղալումյանի վիճաբանության ժամանակ Աստղիկը «ջրի երես է հանել» քաղաքաթետի կողմից իրեն բազմիցս շանտաժի ենթարկելու եւ սպառնալու փաստը:

«Ա«Առավոտի» 21. 02. 2012թ. «Խաղ՝ միլիոնի հետ» հրապարակմամբ տեղեկացվել էր, որ ոստիկանության Տավուշի մարզի քննչական բաժնում նյութեր են նախապատրաստվում նախկին քաղաքաթետ Վարուժան Ներսիսյանի դեմ, որի հիմքը հանդիսացել է Աստղիկ Եգանյանի՝ նորընտիր քաղաքաթետ Վարդան Ղալումյանի մոտ արած խոստովանությունը, թե ինքը եւ Վարուժան Ներսիսյանը մի գույքի հետ կապված օրինախախտում են արել եւ այդ, երբ իմացել են, որ Ղալումյանը հասկացել է այդ մասին, գաղտնի մտել են քաղաքաթետարանի համապատասխան աշխատասենյակը եւ համակարգչում վերացրել թույլ տված աղօրինությունը:

Հինգշաբթի օրը, սակայն, հենց քաղաքաթետարանում մեծ վիճաբանություն է տեղի ունեցել Աստղիկի եւ քաղաքաթետի միջեւ: Ըստ ականատեսների, նրանք փոխադարձաբար միմյանց անոթատվել են, իսկ Աստղիկը քաղաքաթետին մեղադրել է սպառնալիքների միջոցով նախկին քաղաքաթետի դեմ իրենից ցուցմունք կորզելու մեջ:

«Առավոտի» հարցմանն ի պատասխան՝ Աստղիկ Եգանյանը հաստատեց, որ Վարդան Ղալումյանը իրեն սպառնացել է, եւ պատմեց հետեւյալը. «Բոլորիս է հայտնի, որ նախկին եւ ներկայիս քաղաքաթետերը իրար նկատմամբ անձնական թշնամանք ունեն, որը հին պատմություն է: Դա իրենց խնդիրն է, բայց, ցավոք, ներկայիս քաղաքաթետը իր անձնական հարցերը լուծելու համար ուզում է մարդկանց ներքաշել խարդախությունների մեջ: Ինձ հետ եղել է հետեւյալը. Վարդանը հունվարի 26-ին, ժամը 7-ի սահմաններում, ինձ կանչեց իր աշխատասենյակ, մոտ 3-4 ժամ ինձ համոզում էր, որ ես Վարուժան Ներսիսյանի վրա կեղտոտ բաներ գրեմ, ավելի ստույգ այն, ինչը ինքը կասի: Ասում էր, որ եթե չգրեմ, ինձ աշխատանքից կազատի, երեխայիս կվնասի, քոլեջից դուրս կթողնի, չի թողնի Իջեւանում մանգանք, ընդհանրապես Հայաստանից կհեռացնի եւ նմանատիպ այլ բաներ: Սկզբում դիմադրում էի, բայց հետո տեսնելով, որ այդտեղից չեմ կարողանում դուրս գալ, բացի այդ, հոգեպես շատ վատ վիճակում էի, համարձակությունս տեղի տվեց եւ համաձայնեցի գրել այն, ինչ ուզում է, շատ էի վախենում հատկապես երեխայիս համար եւ անաշխատանք մնալուց: Բերեց թուղթ դրեց դեմս եւ ասաց, որ արտագրեմ: Ես նույնությամբ արտագրեցի, ստորագրեցի: Դրանից հետո նոր միայն ինձ թողեց տուն գնալ: Տուն գնացի եւ մի քանի օր շոկի մեջ էի, իմ արածից անգամ ամաչում էի տնից դուրս գալ, մի քանի օր հետո, որ գնացի աշխատանքի, ինձ կանչեց ու ասաց, որ պետք է մտնեմ Ներսիսյանի տուն եւ ձայնագրեմ մեր խոսակցությունը, ասում էր գնա նստի, զրուցի ձեր անցած գործերից ու ձայնագրի: Ես ասացի, որ ավելի լավ է դիմում գրեմ՝ աշխատանքից ազատվեմ, քան նման բան անեմ, ինքն ասաց, որ ես չեմ կարող աշխատանքից ազատվել, ինքը ինձ չի ազատելու: Այդ ընթացքում ամեն առավոտ ժամը 9-ին ինձ կանչում էր, որ համոզի դա անեմ, բացի այդ, ասում էր, որ Ներսիսյանի տղայի վրա էլ մի բան գրեմ, մի բան մտածեմ: Ես դրանից էլ հրաժարվեցի, ասացի՝ նման բան լինել չի կարող: Ես ասում էի, որ ինձ չխառնեն իրենց անձնական հարաբերությունների մեջ: Ասում էի՝ դուք թշնամանք ունեք, ձեր հարցերը իմ միջոցով մի լուծեք: Այդ ժամանակ արդեն ասաց, որ ինձ կազատի աշխատանքից:

Ես հինգշաբթի օրը մտա իր մոտ՝ պարզելու, թե ինչի հիման վրա է ինձ ազատում աշխատանքից: Ասաց. «Այ, անբարոյական, կհեռացնեմ՝ կմտնես դատարան կբողոքես»: Դրանից հետո սկսեցինք իրար անպատվել, ամենավերջին հայհոյանքներով էր խոսում՝ քաղաքաթետին ոչ վայել: Ես էլ իրեն համարժեք պատասխան էի տալիս»:

Իջեւանի քաղաքաթետարանի շենքը:

Աստղիկը մի միջադեպի մասին էլ պատմեց, որի մասին մինչ այդ չի բարձրաձայնել. «Նոր տարուն ես մտածեցի, որ մեր քաղաքաթետն է, իմ ղեկավարը եւ գնացի իրենց տուն՝ շնորհավորելու տոնը: Մի կես ժամ նստեցի, հետո զգացի, որ շատ վատ եմ զգում: Ինձ հետ նման բան չէր եղել, որ ես խմիչքից վատանամ, թե ինչ էր արվել այդ խմիչքի հետ՝ չեմ կարող ասել: Տեղիցս վեր կացա, որ գնամ, վատացա եւ ընկա: Որոշ ժամանակ անց ես եկա մեր տուն, մի 40 րոպե տանը շատ վատ եմ եղել: Ես ոչինչ չեմ հիշում, թե ինչ է եղել նրանց տանը: Կարծում եմ՝ նա նախապես ամեն ինչ պլանավորած է եղել եւ դրանով ինձ նախապես հեղինակազրկելու եւ խայտառակելու միտում է ունեցել»:

Աստղիկ Եգանյանը վերջում հավելեց, որ ոչ մի կեղծիք եւ աղօրինություն էլ չի եղել: «Ներսիսյանը դրա հետ ոչ մի կապ չունի, իմ աշխատանքային ընկերն է եղել, եւ մենք շատ նորմալ աշխատանքային հարաբերությունների մեջ ենք եղել: Ես տեղյակ եմ եղել քաղաքաթետարանի աշխատանքից եւ նման բան երբեք չի եղել: Եվ ես հիմա ամաչում եմ, որ հարկադրված ներքաշվել եմ նման կեղտոտ գործերի մեջ:

Ինձ կանչել են քննչական բաժին եւ ես ցուցմունք եմ տվել եղելությունից, որ ես հարկադրված, սպառնալիքի տակ եմ գրել նման բան»:

ՆԱԻՐԱ ՎԱՆՅԱՆ

Հ. Գ. Իջեւանի քաղաքաթետ Վարդան Ղալումյանի աշխատանոցից դժգոհ է նաեւ ավագանու անդամների մի մասը, որոնք երեկ հանդես են եկել հայտարարությամբ: Այդ մասին «Առավոտը» կանդրադառնա առաջիկա համարում:

Պայմանագրային զինծառայողները լուծարում են պայմանագրերը

Տավուշի մարզում տասնյակ պայմանագրային զինծառայողներ պայմանագրի ժամկետը լրանալուց հետո չեն շարունակում ծառայությունը: Հիմնականում ծառայությունը թողնում են շարքայինները, ովքեր սահմանագոտու բնակիչներ են: Չնայած փետրվարից վերջիններիս աշխատավարձը 20 հազար դրամով բարձրացել է, սակայն դա չի ազդում ծառայությունը շշարունակելու նրանց որոշման վրա: Սահմանապահ դիրքերում ծառայության վտանգները շատ են, ծառայության պայմանները՝ շատ բարդ, ստացած աշխատավարձը համարժեք չէ դրանց: Նշենք, որ շատ պայմանագրային զինծառայողներ բանկերում չմարված վարկեր ունեն եւ ծառայության են անցել ընտանիքի ֆինանսական դժվարին վիճակի պատճառով:

Տուրիստական կենտրոնի ընկնող «գործարանը»

Դիլիջան քաղաքի Շահումյան փողոցում դատարանի շենքի մոտ նախկին կաթի գործարանի շենքն է: Գործարանը սեփականաշնորհված է; Դիլիջանցիների խոսքերով՝ սեփականատերն այժմ Ռուսաստանում է: Շենքի ճակատից «գործարան» ցուցանակի տառերն ընկնում են, շենքի ճակատային մասը կիսավեր վիճակում է: Տուրիստական քաղաք Դիլիջանում այժմ նոր օբյեկտների շինարարություն է ընթանում, քաղաքը փոխում է դիմագիծը: Նման կիսավեր շինությունը հարիր չէ միջազգային ֆինանսական կենտրոն դառնալու հավակնություններ ունեցող քաղաքին:

Հակոբ Հակոբյանն անդամագրվում է ՀՀԿ-ին

Տավուշի մարզի թիվ 41ընտրատարածքից Աժ պատգամավոր, «Երեւանի գարեջուր» ՓԲԸ խորհրդի նախագահ Հակոբ Հակոբյանը 3 օր առաջ դիմում է ներկայացրել ՀՀԿ ընդունվելու համար: Այս մասին տեղեկացա Հակոբ Հակոբյանից: Վերջինս Ազգային ժողովի այն փոքրաթիվ պատգամավորներից է, ովքեր անկուսակցական էին: Նախկինում Հ. Հակոբյանը եղել է «Օրինաց երկիր» կուսակցության անդամ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

«Խզարեցիր, ապրես»

Ժյուրիի անդամ Գարիկ Պապոյանը այսպես գովեց «Հայ սուպերսթարի» մասնակցին

«Շանթ» հեռուստաընկերությամբ հեռարձակվող «Հայ սուպերսթար» նախագծի հերթական համերգին հնչեցին 1960-1970-ական թվականների սիրված երգերը՝ համապատասխան մթնոլորտով ու հանդերձանքով: Դա արժանացավ ժյուրիի եւ բոլորի համակրանքին:

«Ով սիրուն, սիրուն», «Կարուսել», «Դու հեռացար», «Քեզ հետ, իմ սեր», «Հայկական տանգո», «Ծաղիկներս ո՞ւմ նվիրեմ» եւ այլ երգեր հնչեցին 90-ականների սերնդի շուրթերից՝ այլ մատուցմամբ ու գործիքավորմամբ:

Այս անգամ նախագիծը նաեւ հյուր ուներ՝ երգահան Մարտին Ահարոնյանն էր: Նա մասնակիցների կատարումների մասին խոսելիս զուսպ էր, բայց գնահատականները հիմնականում բարձր էին:

Ժյուրին նախորդ անգամների նման խստությամբ էր վերաբերվում մասնակիցներին. Գարիկ Պապոյանը Արմեն Մարդանյանից պահանջում էր «հավեսով», «ավելի դուխով» կատարում, Ավետ Բարսեղյանն էլ Ռիմա Ֆարսյանին հորդորում էր՝ պետք չեն «բուրատինոյական» ժեստեր: Ժյուրիի անդամների կարծիքով՝ ամենահաջողվածը Սոնա Ռուբենյանի «Դու հեռացար» երգի կատարումն էր: Լեյլա Սարիբեկյանը այն գնահատեց «արտակարգ», Անդրեն ասաց, որ վերջապես Սոնայի կատարմամբ լսեց հայալեզու երգ, Գարիկ Պապոյանն էլ, թե՝ «խզարեցիր»:

Ժյուրիին չգոհացրեց Էլիզաբեթ Ադիկյանի «Քեզ հետ, իմ սեր» երգի նոր գործիքավորումը. Լեյլա Սարիբեկյանը չհուզվեց, չհասկացավ կատարման իմաստը, Ավետն էլ Էլիզաբեթի «նորարարությունը» բարձր գնահատեց: Մասնակիցներից Արթուր Մացակյանը իր ելույթը սկսեց «Ֆիրմային» «Բարեւ Ձեզ»-ով, հետո հանոյախոսեց՝ «Բոլորդ այսօր գեղեցիկ եք»: Նրա «Հայկական տանգո» երգի կատարումը, չնայած արժանացավ հանդիսատեսի բուռն ընդունելությանը, սակայն ժյուրին բարձր չգնահատեց: Ժյուրիի անդամ Գարիկ Պապոյանի ճեւակերպմամբ՝ լուրջ երգը անլուրջ վերաբերմունքով էր կատարվում: Արաքսյա Ամիրխանյանը երգեց «Ծաղիկներս ո՞ւմ նվիրեմ» երգը, ձեռքի ծաղիկներից մեկն էլ վերջում նվիրեց հաղորդումը վարող Արամին: Չնայած նրա լավ ելույթին՝ ժյուրին պահանջեց ավելի լավ կատարում:

Բոլոր մասնակիցները հուզված էին, շփոթված, բայց ժյուրիի ասածների հանդեպ ուշադիր էին ու խոստանում էին նկատառումները հաշվի առնել՝ հաջորդ համերգին ավելի լավ «մարզավիճակով» հանդես գալու համար:

ՀՌԻՓՍԻՄԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

VIVAcell MTS ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում



«Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամի մեկենասությամբ լույս է տեսել հայկական «Դյուցազնագիրք» շարքի առաջին գիրքը, որտեղ ամփոփվել են Հայաստանի անկախության տարիների ընթացքում հայի արտասովոր տեսակի, ուժի, անկոտրում կամքի եւ հնարամտության նվաճումները:

Մեր «Դյուցազնագիրքը» յուրօրինակ «Գինեսի» ռեկորդների գիրք է: Բայց այն «Մայր գրից» տարբերվում է իր լրջությամբ՝ նրանով, որ ամենաանհեթեթ արդյունքների փոխարեն գրանցվել են հայի տեսակի միայն իսկապես գնահատման արժանի ցուցանիշները:

Գագիկ Ծառուկյանը գրքի նախաբանում գրել է. «Այս գիրքը «Գինեսի» հայկական ռեկորդների յուրօրինակ հանրագիտարան է, որը նախերգանքն է մեր ապագա մեծ նվաճումների: Հայ ժողովուրդը աշխարհին հայտնի է գրականության, մշակույթի, գիտության, արվեստի եւ, հատկապես, մարզաշխարհի տաղանդավոր ներկայացուցիչներով: Վստահ եմ, որ մեր ազգը այսուհետ իր բազկի հզոր ուժով, դարերի փորձությունների միջով անցած իր իմաստությամբ, զարմանալի կենսունակությամբ, հայրենիքի եւ ընտանիքի հանդեպ ունեցած անշեղ հավատով կվերստեղծի երբեմնի դրախտավայր Հայաստանը, որի հիմքերը դնում ենք մենք՝ մեր դյուցազն նախնիների ժառանգորդներս»:

Գրքի հեղինակ Վարդան Թովմասյանն իր հերթին գրքում նշել է, որ ամփոփվել են հայորդիների վեց տասնամյակից ավելի նվաճումները, որոնք պաշտոնապես գրանցվել են մեր հանրապետության «Դյուցազնագիրք» պաշտոնական հանձնաժողովում: Բայց շնորհանդեսի ժամանակ իր խոսքում նաեւ հայտարարեց, որ արդեն իսկ գրանցվել են նոր ռեկորդներ, որոնք ներկայացված են պաշտոնական հաստատման, իսկ շատերն էլ սպասում են գրանցման իրենց հերթին:

Շնորհանդեսին ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանը մեկ անգամ եւս վստահեցրեց, որ ինքը խրախուսելու եւ աջակցելու է ցանկացած նախաձեռնություն, հատկապես՝ մարզական ոլորտի, եթե այն նպաստելու է մեր երկրի հեղինակության բարձրացմանն ամբողջ աշխարհում: Եվ, ի հաստատումն իր խոսքերի, «Դյուցազնագրքի» ստեղծագործական կոլեկտիվին առաջարկեց շարունակել սկսած լավ գործը՝ խոստանալով, որ հայկական «Գինեսի» ռեկորդների նոր նվաճումներն անձամբ կհրատարակի: Ու տեղում նոր ստեղծվող «Դյուցազնագիրք» հիմնադրամի հաշվեհամարին փոխանցեց չորս միլիոն դրամ: «Որքան շատ լինեն հայոց նոր ձեռքբերումները, այնքան հաճախակի դրանք կտպագրվեն հերթական նոր գրքերում՝ անկախ դրանց անհրաժեշտության հաճախականությունից»,- խոստացավ Գագիկ Ծառուկյանը:

ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ

Ծանրորդները որոշում են հանրապետության չեմպիոններին

Երեւանի օլիմպիական հերթափոխի պետական քոլեջում ընթանում են ծանրամարտի Հայաստանի տղամարդկանց եւ կանանց առաջնությունները, որոնց արդյունքներով կազմավորվելու են հավաքական թիմերը: Առաջին օրը որոշվեցին ըստ քաշային կարգերի կանանց հանրապետության չեմպիոնները: Պատվո պատվանդանի առաջին աստիճան բարձրացան՝

48 կգ Հերմինե Եղիազարյան՝ 87 կգ երկամարտում
53 կգ Մարգարիտա Ղազարյան՝ 129
58 կգ Իզաբելլա Յայլյան՝ 175
63 կգ Ռոզալիա Ավետիսյան՝ 159
69l կգ Սիլվա Ջանոյան՝ 187
75 կգ Մելինե Դալուզյան՝ 205
75+ կգ. Նաիրա Հարությունյան՝ 175:

Նույն օրը պայքարն ավարտեցին նաեւ տղամարդկանց 56 կգ քաշայինները: Երկամարտի 205 կգ արդյունքով չեմպիոն դարձավ Գեւորգ Սարիբեկյանը: Դավիթ Գասպարյանը 197 կգ-ով արժանացավ արծաթե մեդալի, իսկ Համազասպ Ջաքարյանը բավարարվեց բրոնզով՝ 192 կգ:

Երեկ տղամարդիկ շարունակում էին պայքարը: 62 կգ քաշային կարգում մրցանակային եռյակը կազմեցին Սմբատ Մարգարյանը (247), Աշոտ Սուքիասյանը (245) եւ Հովհաննես Ղազարյանը (240):

Երկրորդ հերթափոխում (մինչեւ 69 կգ) Հայաստանի չեմպիոնի կոչումը նվաճեց Սամվել Գրիգորյանը՝ 325 կգ: Նրան հաջորդեցին Մանուկ Մկրտչյանը՝ 260 կգ, ու Արսեն Խաչատրյանը՝ 175:

Ա. Հ.

ԺԱՄԱՆՑ

Ինտիմ կյանքը «տարածելը»՝ տղամարդկությունը շեշտելու վատագույն ձեւ

Այն, ինչ եղել է երկուսի միջեւ, չի կարելի «հանրայնացնել»

Տղամարդիկ համարվում են ուժեղ սեռ, բայց իրենց սեռի ուժեղությունը ապացուցելու համար երբեմն գնում են սխալ քայլերի: Անընդհատ իրենց տղամարդկությունն ու առնականությունը չշեշտելը, օրեցօր ավելացող սիրուհիների ցուցակը շտարածելը կամ սեքսից հետո ունեցած բավարարվածության մասին շրջապատում չպատմելը չի նշանակում համեստություն անել: Իսկ ինտիմ կյանքի մանրամասների մասին ընկերների հետ «կիսվելը», զուգընկերուհու ներքնաշորի գույնն ու չափը կամ սեքսում նրա նախընտրած դիրքի մասին խոսելը չի ընդգծում «լավ տղա» լինելը:

«Սեռական հարաբերությունների մասին բարձրաձայնելը, ընկերների հետ իրենց անկողինը քննարկելը, առավել եւս զուգընկերուհու «անկեղծ» լուսանկարները, sms հաղորդագրությունները ընկերներին ցուցադրելը սխալ է: Զուգընկերուհու կամ զուգընկերուհիների հետ ունեցած սեռական հարաբերություններն ու դրանց ձեւերը, որակը քննարկողներն ուղղակի գլուխ գովելու համար են այդպես անում: Տղամարդկանց հաճելի է գլուխ գովել, թե ինչքան կրքոտ է սիրուհին, կամ պատմել այն վերջին «ծիտիկի» մասին, որի հետ հենց առաջին ժամադրության օրը սեքսով է զբաղվել: Տղամարդկություն չէ նաեւ այն, երբ ընկերը հիացմունքով պատմում է իր նոր ընկերուհու սեքսուալ արտաքինի մասին, մյուսը հետ չմնալու ու ընկերոջը ապացուցելու համար, թե ինքն ինչ «հզոր» է, ցույց է տալիս զուգընկերուհու մերկ լուսանկարը, որը անձամբ է արել սեփական բջջայինով»,- «Առավոտի» հետ զրույցում ասում է հոգեբան Շահեն Կարապետյանը, շեշտելով, որ պարծենկոտությունը սեփական անձի շուրջ իրական կամ մտացածին ձեռքբերումների եւ հաջողությունների մասին պատմությունների հորինումն է: Ըստ նրա՝ ինտիմ կյանքի մասին բարձրաձայնողների մեծամասնությունը դա անում է չմտածված, չգիտակցելով, որ իր այդ քայլը կարող է դուր չգալ զուգընկերուհուն, մի մասն էլ ուղղակի հեքիաթներ է պատմում, այսինքն՝ գլուխ է գովում եւ իր թաքնված ցանկություններն արտահայտում պատմությունների ձեւով կամ էլ ուրիշի պատմածն ու ֆիլմերում դիտածը վերագրում իրեն:

«Ինտիմ կյանքի մասին խոսելն այնքան էլ հեշտ չէ. հոգեբանի կամ սեքսապաթոլոգի մոտ հայտնվելիս պարծենկոտ տղամարդկանց 99 տոկոսը լռում է: Երբ առողջական խնդիրներ են ունենում, վախենում ու կոմպլեքսավորվում են մասնագետի հետ քննարկել սեփական ինտիմ կյանքը, որպեսզի լուծվի խնդիրը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ընկերական շրջապատում ասվածը չափազանցություն է: Այլ է, երբ նրանք sms հաղորդագրություններն են ցուցադրում. դա հեշտ է, քանի որ sms գրելիս ավելի ազատ ու անկաշկանդ են, քան հեռախոսով խոսելիս: Նույնն է, որ սոցիալական կայքերում տղամարդիկ իրենց ամենահարուստ, Դոն Ժուան ու ամենակարող են երեւակայում, կանայք՝ աշխարհի ամենակրքոտն ու փորձառուն, բայց երբ վիրտուալ շփումը տեղափոխվում է իրական կյանք, երկուսի դեմքում էլ բացահայտվում է չափազանցությունը: Ինչ վերաբերում է զուգընկերուհիների ինտիմ լուսանկարները ցուցադրելուն, ապա թող ինձ ներեն տղամարդիկ, բայց դրանցով հպարտացողներն ուղղակի թուլամորթներ են: Եթե կինը թույլ է տվել, խնդրել իրեն մերկ լուսանկարել, կամ թեկուզ լուսանկարում դուք երկուսով եք ինտիմ վիճակներում՝ այն ուրիշներին ցուցադրելով հաստատ ձեր տղամարդկությունը չի շեշտվելու»,- նշում է Շ. Կարապետյանը, ավելացնելով, որ միայն ինտիմ կյանքում ունեցած հաջողություններով հպարտանալու փոխարեն կարելի է պատասխանատու աշխատանքով, վաստակով ու կյանքի այլ ոլորտներում ունեցած փառքով պարծենալ:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ